

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ Դրական Քայլ Մը

Վերջերս յայտարարուեցաւ թէ, «Արդարութիւն Գաղափարներ» նախաձեռնութեան սփիւռքահայ անդամներ՝ Գաղափարային յայտնի միջազգային բեմադրիչ Ատոմ Էկոյեան, աշխարհահռչակ երաժիշտ Սերժ Թանճեան, դերասանուհի Արսիճէ Խանճեան եւ ուրիշներ, յառաջիկայ Ապրիլին Գաղափարային մէջ տեղի ունենալիք խորհրդարանական ընտրութիւններուն առթիւ պիտի ժամանեն Երեւան՝ որպէս դիտորդ հետեւելու գործընթացին, փորձելով իրենց նպաստը բերել՝ զոնց այս անգամ աւելի ազատ, արդար եւ թափանցիկ ընտրութիւններու կայացումը ապահովելու ուղղութեամբ:

Այս նախաձեռնութիւնը բաւական «պաղ» վերաբերմունքի արժանացաւ իշխող կուսակցութեան շրջանակներուն կողմէ: Գաղափարային կուսակցութեան բանբեր՝ Էդուարդ Շարմազանով, այս կայակցութեամբ յայտարարեց. «Մեզ վերահսկիչներ պէտք չեն: Մեզ պէտք են օժանդակողներ, միասնական քայլեր կատարողներ, որպէսզի մենք բոլորս միասին գնանք առաջ»: Նոյնանման յայտարարութեամբ հանդէս եկաւ նաեւ սփիւռքի Նախարար Զրանոյշ Յակոբեանը: Երկու պետական անձնակազմներուն խօսքերու ետին թաքնուած էր որոշ դժգոհութիւն՝ այս եւ նման նախաձեռնութեան նկատմամբ: Կարծէք ըսել կ'ուզենք, որպէս սփիւռքայաբնակ իրաւունք չունիք Գաղափարային ներքին գործերուն միջամուխ ըլլալու:

Անցեալ ապրիլեան պատերազմը եւ Յունսին «Սասնայ Ճեւրու» գործողութիւնը ու այդ առթիւ ժողովրդի դրսեւորած կեցուածքը, շատ բան եկան փոխելու սփիւռքահայութեան մօտ: Նոյնիսկ անոնք, որոնք հեռու կը մնային, Գաղափարային իշխանութիւններուն հանդէպ բացայայտ կեցուածք որդեգրելէ, այս երկու իրադարձութիւններէն ետք, շատ աւելի քննադատական մօտեցում սկսան ցուցաբերել՝ անդրադառնալով թէ որպէս հայեր, ուր որ ալ գտնուին, չեն կրնար անտարբեր վերաբերիլ, երբ հայրենիքը վտանգուած է ու երկիրը «անուանագուած»՝ խուճիկ մը մարդոց կողմէ, որոնք բացառապէս անձնական շահերէն մտնուած Գաղափարային կառաջնորդներն զէպի անդունդի եզր:

Յայտնի արուեստագետներու այս նախաձեռնութիւնը գործնական արդիւնքներու կրնայ չհասնիլ՝ ընտրակեղծիքներու առաջը առնելու գծով, այսուհետեւ դերակրան քայլ մըն կը նկատուի, առնուազն հայաստանի հանրային կարծիքի ուղղութիւնը գրաւելու ու ժողովուրդը, աւելի գիտակից մօտեցումով քուէարկութեան մղելու ուղղութեամբ:

«ՄԱՍԻՍ»

Գոնկրեսական Ատոմ Շիֆ Խորապէս Մտահոգուած է Թրամփի Եւ Իր Խուճիկ՝ Թուրքիոյ Զետ Ունեցած Կապերով

«Հայաստանը Միացեալ Նահանգներու կարեւոր գործընկերն է, եւ մենք շահագրգռուած ենք տեսնելու Հայաստանը տնտեսապէս զարգացած»: Այս մասին «Ամերիկայի Ձայն»-ին ըսած է ԱՄՆ գոնկրեսական, Հայկական յանձնախումբի փոխհամահայրապետ Ատոմ Շիֆ:

Հայաստանի տնտեսութեան զարգացման համար գոնկրեսականը առանձնացուցած է բարձր ճարտարարուեստագիտութիւններու ոլորտը, որ ըստ իրեն մեծ հեռանկարներ ունի Հայաստանի մէջ:

Հայաստանի տնտեսական զարգացման կարեւոր արտաքին խոչընդոտներէն է Թուրքիոյ շրջափակումն ու Ատրպէյճանի հետ կապուած խնդիրները, ըսած է գոնկրեսականը: Ան կոչ ըրած է ԱՄՆ-ի դիւանագետներուն աւելի կտրուկ ու առարկայական կերպով արձագանքել Ատրպէյճանի կողմէ զինազարգարի խախտումներուն:

ԱՄՆ-ի համար՝ Հայաստանի հետ յարաբերութիւններու կարեւորութիւնը գոնկրեսական Շիֆ կա-



Գոնկրեսական Ատոմ Շիֆ

պած է նաեւ ամերիկահայ մեծ համայնքի առկայութեան հետ, որ, ըստ Շիֆի, աշխուժ դեր ունի Հայաստանի կեանքին մէջ, յատկապէս երկրի օրէնքի զերակայութեան հաստատման խնդրին նկատմամբ:

Շար.ը էջ 5

Սերժ Սարգսեան. «Պէտք է Պատրաստ Ըլլալ Դժուար Ժամանակներու»

Ստեփանակերտ իր կատարած այցելութեան ծիրէն ներս, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան մշակութային գործիչներու հետ հանդիպման ընթացքին կատարած է բաւական ուշադրաւ յայտարարութիւններ: «Լեւոնային Ղարաբաղի կարգաւորման հարցով բանակցութիւններ չկան: Չասեմ բանակցութիւններ, վերջին լուրջ խօսակցութիւնը Լեւոնային Ղարաբաղի խնդրով տեղի է ունեցել Օգոստոսի 10-ին: Դրանից յետոյ որեւէ լուրջ խօսակցութիւն խնդրի մասին չի եղել», - ըսած է Սարգսեան:

Պատասխանելով այն հարցին, թէ ինչու յատկապէս հիմա է որ նախագահը որոշած է այցելել Ղարաբաղ, Սերժ Սարգսեան շեշտած է. «Դա ներքին պարտադրանք է, որովհետեւ հիմա այն ժամանակահատուածն է, երբ եւ՝

Շար.ը էջ 5

Մեծ Ընդունելութեամբ Ներկայացուեցաւ Զայ-Ամերիկեան Թանգարանի Ծրագիրը



Զայ-Ամերիկեան թանգարանի կառուցման ծրագրի ներկայացման ժամանակ

Իր բնոյթով բացառիկ հաւաք մըն էր որ տեղի ունեցաւ անցեալ Հինգշաբթի, Դեկտեմբեր 8, 2016, Կլեմտէյլի «Պրէնտիվու» շքեղ դահլիճին մէջ: Հայ-Ամերիկեան Թանգարանի Հոգաբարձուներու Մարմնի կողմէ կազմակերպուած սոյն ընդունելութեան նպատակն էր նախատեսուած կառուցի տեսքի պաշտօնական ծանօթացումը ընդհանուր հասարակութեան:

Պատմական հաւաք մըն էր, որուն ներկայ էին հայ գաղութի կրօնական երեք յարանուանութեանց առաջնորդները, քաղաքական կազմակերպութիւններու ղեկավարները, ազգային տարբեր կազմակերպութեանց, մամուլի եւ հեռատեսիլի ներկայացուցիչներ, Կլեմտէյլի

քաղաքապետուհի Տիկ. Փօլա Տիվայն, ինչպէս նաեւ քաղաքապետական Խորհուրդի հայ անդամները, նահանգային գոնկրեսականներ եւ շուրջ 400 հրաւիրեալներ:

Օրուան հանդիպար Ջաւէն Գազազեանի հրաւերով չորս համատեղակցներու հոգեւոր առաջնորդներ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, Գերշ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, Գերպ. Միքայէլ Եպս. Մուրատեան, Վերպ. Պերճ Ճամպազեանի հաւաքական արթթիւքով բացումը կատարուեցաւ յայտարարին:

Իր բացման խօսքին մէջ Ջաւէն Գազազեան բնութագրեց հայ Ամերիկեան Թանգարանի ու մշա-

Շար.ը էջ 18

Մեկնաբանութիւններ Սամանթա Փաուլըի Յայտարարութիւններուն Շուրջ

Միացեալ Նահանգներու երկրորդ բարձրաստիճան դիւանագետ, ՄԱԿ-ի մէջ ԱՄՆ-ի դեսպան Սամանթա Փաուլըի Հայոց ցեղասպանութեան մասին հրապարակային յայտարարութեանէն ետք, «Ամերիկայի Ձայն» հարց տուած է, թէ արդեօք Օպամայի վարչակազմը քողագերծուած կերպով ճանչցած է Առաջին Աշխարհամարտի տարիներուն հայերու դէմ իրականացուած ջարդը, որպէս՝ ցեղասպանութիւն:

Վերջերս, Հրէական ողջակիցման նուիրուած հանդիպման ժամանակ, Փաուլը խօսելով պատմական անարդարութիւններու մասին, խօսած էր նաեւ Հայոց ցեղասպանութիւնը հերքողներու մասին:

Նոյն հարցը տուած է նաեւ «Նիւ Եորք Թայմզ» օրաթերթը՝ նշելով, որ այս 4 բառերը կրնան «կատողեցնել» ՆԱԹՕ-ի մէջ ԱՄՆ-ի դաշնակից Թուրքիան, որ ամէն գնով կը հակադարձէ ցեղասպանութեան մասին որեւէ ակնարկի: «Քանի, որ Թուրքիա կը գտնուի աշխարհի ամենանկաշտ տարածաշրջաններէն մէկուն մէջ, դար մը առաջ տեղի ունեցած ջարդերու մասին խօսելու ատեն, ԱՄՆ-ի պաշտօնատար անձինք կը ցուցաբերեն ծայրայեղ զգուշութիւն», կը գրէ թերթը:

Գոնկրեսական Ֆրանք Փալո-

Շար.ը էջ 5

Վաղուայ Պատերազմը. Խոստովանութիւն Արցախում

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

«Դա ներքին պարտադրանք է, որովհետեւ հիմա այն ժամանակահատուածն է, երբ ե՛լ զօրքը, ե՛լ բնակչութիւնը, ե՛լ ԼՂՀ քաղաքացիներն արդէն պատրաստ պէտք է լինեն մի դժուարին ժամանակահատուած անցկացնելու: Զօրքը շատ կարիքներ ունի, եւ այդ կարիքները պէտք է գնահատել, որովհետեւ մեր հնարաւորութիւնները անասանափակ չեն, որպէսզի բոլոր հարցերը, բոլոր խնդիրները լուծուեն», Արցախում Հայաստանից ժամանած մշակութային գործիչների հետ հանդիպմանն ասել է Սերժ Սարգսեանը, պատասխանելով տիկնիկային թատրոնի տնօրէն Ռուբէն Բաբայեանի հարցին, թէ ինչու է յատկապէս այժմ այցելել Արցախ:

Սարգսեանն ասել է, թէ իր համար այցը պարտադրանք է: Նա միաժամանակ նշել է, թէ Արցախի հարցում բանակցութիւն փաստացի չկայ՝ վերջին անգամ դա եղել է Օգոստոսի 10-ին: Սարգսեանը ասել է նաեւ, թէ սահմանին առանձնապէս լարուած իրավիճակ չկայ, եւ այն հանգիստ է աւելի, քան օրինակ մէկ տարի առաջ:

Սերժ Սարգսեանն ուշագրաւ նրբերանգներ է շօշափել: Ոչուելով այն մասին, որ վերջին բանակցութիւնը եղել է Օգոստոսի 10-ին, նա փաստօրէն արձանագրել է, որ Արցախի խնդիրը չկայ նաեւ խոշոր տէրութիւնների օրակարգի առաջին տեղերում: Բանն այն է, որ Օգոստոսի 10-ը թուարկելով, Սարգսեանն ըստ ամենայնի խօսել է Օգոստոսի 10-ին իր Ռուսաստան կատարած այցի եւ ՌԴ նախագահ Փութինի հետ հանդիպման մասին:

Այդպիսով, Սարգսեանն ակնարկում է, որ դրանից յետոյ չի եղել որեւէ թէ ուղիղ, թէ միջնորդաւորուած բանակցութիւն:

Այդ իրավիճակն իհարկէ

ստեղծում է հակասական իրականութիւն: Մի կողմից դա ենթադրում է, կամ վերահաստատում է ԱՀԿ միջնորդների ակնարկները Արցախի հակամարտութեան սառեցման մասին, միւս կողմից սակայն առաջացնում տազնապներ, թէ արդեօք Ալիեւն ուշագրութիւն գրաւելու եւ գործընթաց խթանելու համար չի դիմի նոր ռազմական սադրանքի:

Կը դիմի, անշուշտ, հենց որ զգայ, որ Հայաստանն ու Արցախը պատրաստ չեն դրան եւ ենթակայ են հերթական թէկուզ մի քանի հարիւր հեկտարի կամ մեթրի կորստի: Ալիեւը չի գնայ այդպիսի արկածախնդրութեան, եթէ գիտենայ, որ այդ կորուստն այս անգամ կը սպառնայ արդէն Ատրպէյճանին:

Այդ առումով կան մեղմ ասած մտահոգութիւն եւ հարցեր առաջացնող իրողութիւններ, սկսած Ապրիլի պատերազմի հրադարարի հաստատման խորհրդավոր մեխանիզմից՝ ԶՈՒ գլխաւոր շտաբի պետերի մոսկովեան իբրեւ թէ հանդիպման փաստով՝ որի մասին Սերժ Սարգսեանն օրերս յայտարարել էր, թէ չգիտէ մանրամասն ինչ են խօսել, մինչեւ Ապրիլի պատերազմից յետոյ հայ-ռուսական միացեալ զօրախմբի վերաբերեալ բազմաթիւ հարցեր առաջ բերած նոր համաձայնագիր:

Ապրիլի պատերազմից յետոյ Հայաստանը ցուցադրեց իսկանդերները, Սմերչերը, ռադիոէլեկտրոնային պայքարի նոր միջոցները: Դրանց մի մասն անկասկած լայնածաւալ պատերազմի համար զսպման կարեւոր ռազմաքաղաքական գործօն են, միւս մասը կարեւոր սպառազինութիւն են ապրիլեան պատերազմի համար: Այդուհանդերձ յստակ է, որ լոկ այդ սպառազինութեան ցուցադրութիւնը բաւարար չէ համոզուած լինելու համար, որ Հայաստանն այս անգամ մէկ քայլ

առաջ է հակառակորդից, այսինքն պատրաստ է «վաղուայ պատերազմին», ինչպէս նշանակումից յետոյ արտայայտուել էր պաշտպանութեան նոր նախարար Վիգէն Սարգսեանը:

Հայաստանն իրապէս կանգնած է այլընտրանքի բացակայութեան առաջ, եւ այսօր պատերազմ չունենալու համար Հայաստանը միշտ պէտք է պատրաստ լինի հենց վաղուայ պատերազմին: Այդ իմաստով ուշագրաւ է հնչում Սերժ Սարգսեանի յայտարարութիւնը, որ թէ զօրքը, թէ քաղաքացիները պէտք է պատրաստ լինեն դժուար ժամանակահատուածի:

Բանն այն է, որ Ապրիլի պատերազմը ցոյց տուեց՝ թէ զօրքը, թէ քաղաքացիները պատրաստ են դժուարութեան, եւ միակ սուբիեկտը կամ սեզմենտը, որ պարզուեց անպատրաստ է՝ իշխանութիւնն էր: Այն բացերը, որ ի յայտ եկան Ապրիլին, պայմանաւորուած էին գերազանցապէս այդ իշխանութեան, «էլիտայի» թերացումով: Ընդ որում, թերացումով, որն իհարկէ միայն վերջին մի քանի տարիներին չէ, որ բաժին է ընկնում, այլ ընդհանրապէս յետպատերազմեան երկու տասնամեակի տարիների կառավարմանը, դրանցում թոյլ տուած բացթողումներին:

Պատահական չէ, որ Ապրիլից յետոյ համեմատելով կատարուած աշխատանքը առաջնագծում, շատերը, այդ թւում անկախ աղբիւրներ, արձանագրում էին, որ մի քանի ամսում կատարուել է այնքան, որ չէր կատարուել անգամ երկու տասնամեակում:

Ան այդ իմաստով, Սերժ Սարգսեանի յայտարարութիւնից յետոյ հարց է առաջանում՝ քաղաքացիներն ու զօրքը պատրաստ են, հենց դրա շնորհիւ է, որ Ապրիլին չեղաւ աղէտալի պարտութիւն, իսկ իշխանութիւնը, «էլիտան» պատրաստ է դժուար ժամանակահատուածի:

Նոր Դաշինք, Նոր Հարցեր, Նոր Ինտրիգ

ԱՐԱՍ ԱՍՏՈՒՆԻ

«Լուսաւոր Հայաստան», «Քաղաքացիական Պայմանագիր» եւ «Հանրապետութիւն» կուսակցութիւնները յայտարարեցին նախընտրական դաշինքի շուրջ համաձայնութեան մասին, որով նրանք մասնակցելու են խորհրդարանի ընտրութեանը: Արդիւնաւէտ գործակցութեան դէպքում կուսակցութիւնները հնարաւոր են համարում յետագայում մէկ կուսակցութեան վերածելը:

Այսպիսով՝ 2017 թուականի խորհրդարանական ընտրութեանն ընդառաջ առաջին ընդդիմադիր միաւորումը կամ դաշինքը փաստօրէն իրականութիւն է, իսկ թէ ինչպիսի իրականութիւն է՝ կ'երեւայ առաջիկայ ամիսների ընթացքում: Մի բան ակնյայտ է հենց սկզբից՝ խորհրդարանի 2017-ի ընտրութիւնը թերեւս առանձնաաւել է հենց այդպիսի բոլորակի մասնակցութեամբ, քանի որ այլ պարագայում պայքարել իշխանութեան վարչական ռեսուրսի դէմ ու դնել քաղաքական նպատակներ ընդդիմադիր դաշտի կուսակցութիւնների համար լինելու է գերդժուար կամ գրեթէ անհնար:

Այս տեսանկիւնից արձանագրուած քայլն ինքնին արդէն իսկ

համարժէք է նոր քաղաքական իրողութիւնների եւ մարտահրաւէրների տրամաբանութեանն ու պահանջներին: Միեւնոյն ժամանակ, լինելով համարժէք, անկասկած անբաւարար է հանրային-պետական խնդիրները սպասարկելու տեսանկիւնից, անգամ հռչակուած ընդհանուր սկզբունքների եւ արժէքների պարագայում՝ քաղաքացիականութիւն, ժողովրդավարութիւն, իրաւունք եւ ազատութիւններ:

Բանն այն է, որ ընդհանուր սկզբունքներից բացի՝ կարեւոր են արդէն շատ կոնկրետ խնդիրները, նախաձեռնութիւնները, հանրութեանն արուող շատ կոնկրետ առաջարկները, որոնցով հանդէս պէտք է գայ նոր դաշինքը: Այստեղ, իհարկէ, իրականութիւնը բաժանուած է երկու մասի՝ նախընտրական եւ յետընտրական: Քանի որ երկրորդ մասը երեք ուժերը պայմանաւորում են առաջինում գործակցութեան արդիւնքով, հսկան է դառնում արդիւնքի հարցը: Ո՞ր արդիւնքն է համարուելու լաւ, գոհացուցիչ:

Եթէ դա խորհրդարանի ընտրութեանը յաղթանակն է, ապա այստեղ երեւի թէ առաջանում է իրատեսականութեան, պրագմատիզմի հետ կապուած լուրջ խնդիր, ինչը կը սպառնայ դաշինքին ար-

Հայաստանի իշխանութիւնը, «էլիտան» պատրաստ է այդ դժուարութիւնը յաղթահարելու եւ «վաղուայ պատերազմին» պատրաստ լինելու համար հրաժարուել թէ այն կառավարման կերպից, թէ այն կենսակերպից, որ իր համար, իր մերձաւոր շրջապատի համար ապահովել է փաստացի պետութեան պատրաստութեան հաշուին, հասարակութեան հաշուին, նոյն զօրքի եւ քաղաքացիների հաշուին:

Առաջին պատերազմի աւարտից յետոյ Հայաստանի քաղաքացին հենց միայն դժուարութիւն է, որ կրել է իր վրայ, այն պարագայում, երբ իշխանութիւնն աւելի ու աւելի շատ իր վրայ կրել է նորանոր շքեղութիւն եւ յարմարուեցութիւն:

Այժմ որեւէ կերպ նկատելի չէ, որ այդ «էլիտան» հրաժարուած է իր շքեղութիւնից եւ յարմարուեցութիւնից՝ յօգուտ վաղուայ պատերազմի պատրաստ լինելու, այսինքն յօգուտ մշտական խաղաղութիւն պարտադրելու:

Աւելին, ՀՀ վերջին համագումարում ընդամենը մի քանի շաբաթ առաջ Սերժ Սարգսեանի ունեցած ելոյթը երաշխիք էր հենց այդ «էլիտային», որ պէտք չէ ունենալ սկզբունքային փոփոխութիւնների մտավախութիւն, եւ բոլորը գնում են դէպի իշխանութեան վերարտադրութիւն: Իսկ զօրքն ու քաղաքացիները թող պատրաստ լինեն դժուար ժամանակահատուածի:

Ըստ երեւոյթին, հենց այդ վերարտադրութեան ճամբան էլ նկատի ունի Սարգսեանը, որովհետեւ եթէ ՀՀ-ն գնում է վերարտադրութեան, դա իսկապէս նշանակում է, որ Հայաստանին սպասում է դժուար ժամանակահատուած, եւ պետութիւնը պահելու յոյսը կրկին զօրքն ու քաղաքացիներն են:

«ԼՐԱԳԻՐ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՏՈՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՉԱԿԵԱՆ
 ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՅԵԱՉԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երեք կուսակցություններ Ստորագրեցին Համագործակցության Յուզագիր



Երեք կուսակցություններու ղեկավարները կ'ստորագրեն ընտրական դաշինքի պայմանագիրը

«Լուսաւոր Հայաստան» (ԼՀ), «Հանրապետութիւն» եւ «Քաղաքացիական պայմանագիր» (ՔՊ) կուսակցութիւնները պաշտօնապէս յայտարարեցին խորհրդարանական, ապա նաեւ Երեւանի ակադեմիայի ընտրութիւններուն դաշինքով մասնակցելու մասին:

Երեք ուժերը քաղաքական համագործակցութեան յուշագիր ստորագրեցին, որուն մէջ, մասնաւորապէս, նշուած է, որ կողմերը համատեղ գործունէութեան, նոր ուժերու ներգրաւման վերաբերեալ որոշումները կը կայացնեն համաձայնութեամբ, համատեղ գործունէութեան արդիւնքով կը սկսին բանակցութիւններ միասնական կուսակցութիւն ստեղծելու վերաբերեալ: Տակաւին անուանում չունեցող դաշինքը յոյս ունի ստանալ ընտրողներու քուէներու 50 գումարած 1 տոկոսը:

ՔՊ անդամ, Աժ պատգամաւոր Նիկոլ Փաշինեան ըսաւ. «Ասել ենք նաեւ մեր արտահերթ համաժողովից առաջ եւ համաժողովի ընթացքում, որ մենք նախկինում կայացուած որոշումներով կաշկանդուած չենք եւ այս համատեքստում բոլոր քննարկումները պէտք է սկսուեն գրոյից: Այսինքն՝ կողմերից որեւէ մէկը չի եկել միւս գործընկերներին ինչ-որ լուծումներ պարտադրելու եւ այլն»:

Վանաձորի նախընտրական պայքարի ընթացքին, «Լուսաւոր Հայաստանը» եւ «Քաղաքացիական պայմանագիրը» իրար հասցէին հնչեցուցած մեղադրանքը, եւ մաս-

նաւորապէս՝ ԼՀ առաջնորդ, Աժ պատգամաւոր Էտոն Մարուքեանի՝ իրական ընդդիմադիր ըլլալու կասկածի տակ առած Փաշինեանը, «Լուսաւոր Հայաստանի» ղեկավարի մասին, ըսաւ. «Մենք բարձրաձայնել ենք մեր պատկերացումները, արձանագրել ենք մեր տարբերակները եւ այսօր, ի դէմս այդ երեք փաստաթղթի, մենք ունենք իրավիճակ, երբ այդ տարաձայնութիւնները կլուրջաւորուին յղթահարուած են»:

Էտոն Մարուքեանը աւելցուց. «Մեզ ոչ միայն քննադատում էին նրա համար, որ անհայտ էինք, այլ նաեւ քննադատում էին, որ չենք միանում: Եւ մենք, վեր կանգնելով այդ ամէնից, բնականաբար քննարկելով այդ ամէնը միասին, սկսում ենք մի նոր՝ շատ կարեւոր ճանապարհ»:

Հարց հնչեց նաեւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախկին ղեկավար Գաբրիլ Ծառուկեանի վերադարձի եւ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի՝ խորհրդարանական ընտրութիւններուն մասնակցելու մտադրութեան մասին: Հարցին պատասխանեց «Հանրապետութեան» ղեկավար Արամ Սարգսեանը. «Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութիւնը չի արգելում ո՛չ Լեւոն Տէր-Պետրոսեանին, ո՛չ Գաբրիլ Ծառուկեանին ընդդիմադիր գործունէութեամբ գրադուել: Լեւոն Տէր-Պետրոսեանի մասով չեմ կասկածում, որ կը ծաւալի ընդդիմադիր գործունէութիւն: Գաբրիլ Ծառուկեանի մասով՝ ժամանակը ցոյց կը տայ»:

ՀԱԿ-ի նախընտրական Ցուցակը Պիտի Գլխաւորէ Լեւոն Տէր-Պետրոսեանը

Հայ Ազգային Գոնկրեսի նախընտրական ցուցակը պիտի գլխաւորէ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը: Այս մասին յայտնեց ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը:

Քաղաքական այլ ուժերու հետ բանակցութիւնները, ըստ Զուրաբեանի, հնարաւոր են, բայց անոր կարծիքով որեւէ մէկը չի կրնար նախընտրական ցուցակը գլխաւորել քան Լեւոն Տէր-Պետրոսեանը:

Լեւոն Զուրաբեան ճեպագորոյցներու ընթացքին յայտարարեց, որ Հայաստանի իշխանութիւնները աջժմ գրադարձ են նախընտրական աճապարուութեամբ: «Վարչապետ Կարէն Կարապետեանը Գիւմրիում յայտարարել է, որ Հայաստանում մենաշնորհ չկայ: Ես

էլ կարող եմ յայտարարել, որ Հայաստանում Կարէն Կարապետեանի կառավարութիւն չկայ: Դուք ինձ կը հաւատա՞ք: Չէք հաւատայ: Այդ դէպքում մենք ինչո՞ւ պիտի նման յայտարարութիւններին հաւատանք», ըսաւ Զուրաբեան:

Ընդդիմադիր պատգամաւորի գնահատմամբ՝ իշխանութիւններու նախընտրական գլխաւոր աճապարուութիւնն այն է, որ ինչպէս միշտ, ընտրութիւններէն առաջ կը փորձեն իրենց նոր կերպարը ստեղծել. օրինակ՝ կառավարութեան հանցին ամենագոյնի դէմքերը: «Այս ամէնն արուած է մէկ նպատակով՝ ընտրութիւններէից առաջ կեանքից դժգոհ բնակչութեան շրջանում դրական տրամադրութիւն ստեղծելու», - աւելցուց Լեւոն Զուրաբեան:

Փաստաբանները Պահանջում են Վարոյթ Սկսել Վճռաբեկ Դատարանի Նախագահ Արման Մկրտումեանի Դէմ

Մի խումբ փաստաբաններ դիմել են ՀՀ դատաւորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի յանձնաժողովին: Նրանք պահանջում են յանձնաժողովից պարզելու, թէ արդեօք յարուցուե՞լ է կարգապահական վարոյթ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Արման Մկրտումեանի նկատմամբ:

Իրենց յայտարարութիւնում փաստաբանները նշում են, որ Մարդու իրաւունքների եւրոպական Դատարանի 2016թ. Հոկտեմբերի 27-ին «Վարդանեանն ու Նանուշեանն ընդդէմ Հայաստանի» գործով կայացրած վճռում արձանագրուել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ Ա. Մկրտումեանի կողմից թոյլ է տրուել մարդու իրաւունքների եւ հիմնարար ազատութիւնների պաշտպանութեան մասին կոնվենցիայի 6-րդ յօդուածի 1-ին մասի խախտում:

«Համաձայն ՀՀ դատական օրէնսգրքի 153 եւ 155 յօդուածները, ՄԻԵԴ նշուած վճիռը հիմք է դատաւորի նկատմամբ կարգապահական վարոյթ յարուցելու համար, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի նկատմամբ կարգապահ-



ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Արման Մկրտումեան

հական վարոյթ յարուցելու իրաւունքը վերապահուած է բացառապէս Դատաւորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի յանձնաժողովին: Այդ կապակցութեամբ խնդրում ենք յայտնել, թէ արդեօք յանձնաժողովի կողմից յարուցուել է կարգապահական վարոյթ Ա. Մկրտումեանի նկատմամբ, թէ ոչ», - ասուած է փաստաբանների յայտարարութիւնում:

Յայտարարութեան տակ ստորագրել է 36 փաստաբան:

Վարչապետ՝ Չեմ Եկած Վեց Ամիս Աշխատելու

«Եթէ մեր կառավարութիւնը, մեր թիմը էֆեքթիւ աշխատի, եւ եթէ պահանջ եղած լինի, [ինձ] վարչապետ եմ տեսնում», - Հայաստանեան լրատուամիջոցներու ղեկավարներուն հետ հանդիպման յայտարարեց Կարէն Կարապետեանը, շարունակելով. «Չեմ եկել վեց ամիս աշխատելու: Բայց միեւնոյն ժամանակ, եթէ մենք արդիւնք ցոյց տանք, եթէ հանրութիւնը, ժողովուրդը, մեր քաղաքացին, գիւղացին, բանուորը, պիղծեմք, գիտնականը հասկանան, զգան, որ իւրաքանչիւր օր մենք ճիշդ ուղղութեամբ ենք գնում, որ մենք ինչ-որ ձեւի ցոյց ենք տալիս այն հորիզոնները, որոնք որ հրապուրիչ են, որոնք որ բաւարար են հասկանալու համար, որ ճիշդ ուղղութեամբ ենք գնում, մենք կը փորձենք աշխատել երկարատեւ»:

Իշխող կուսակցութեան անդամակցելուն գրեթէ այլընտրանք չտեսած վարչապետը այնուամենայնիւ կը կարծէ, որ իր վարկանիշը անդամատոմս ձեռք բերելէ յետոյ ինկած է: Ան վստահեցուց, որ ստիպողաբար կուսակցական չեն դարձած. «Եօթ հազար հոգին ընդունուել է, եւ ստիպողական է, թէ

չէ՛ դուք այնքան հնարաւորութիւն ունէք այդ ստուգելու»:

Կարապետեանի եւ նախագահ Սարգսեանի Հայաստանի տնտեսութեան նկատմամբ պատկերացումներու տարբերութեան մասին, վարչապետը նշած է. «Նախեւառաջ, նախագահի հետ այսօր մեր աշխատանքը կառուցուած է հետեւեալ առումով, որ տնտեսական պլոքում մեր այսօրուայ թիմը ունի ազատութեան աստիճան՝ որոշում կայացնելու: Տնտեսական առումով մեր պատկերացումները տարբեր են: Մաքրօ առումով՝ չէ: Կարող են հարցեր լինել, որ մենք տարբեր ձեւ նայենք: Եւ դա նորմալ է, տրամաբանական է: Նոյն մեր թիմի մէջ ես մի ձեւով կարող եմ նայել, մէկ այլ նախարար մէկ ուրիշ ձեւ նայել, եւ դրա շուրջը բանակցենք»:

Վարչապետը յայտնեց, որ ծանր տնտեսական վիճակի ամբողջական ախտորոշումը, կուտան Յունուարի վերջը:

Անդրադարձալով ներքաղաքական զարգացումներուն, Գաբրիլ Ծառուկեանի քաղաքականութեան վերադառնալուն, օրինակ, Կարապետեանը կը վերաբերի, իր խօսքով՝ «չատ հանգիստ»:

Կարէն Կարապետեանի Առաջարկը Յունից Հանել է ՀՀ-ական Կանանց


«Ժամանակ» թերթը գրում է. «ՀՀ-ն կուսակցութեան դէմ քը որոշել է սկսել փոխել նախընտրական ցուցակից: Միաժամանակ, ՀՀ-ական կին պատգամաւորներն ու նախարարները ՀՀ նախընտրական ցուցակում առաջին կին թեկնածուի տեղի համար մեծ կուլ են սկսել:

«Ժամանակ»-ի տեղեկութիւններով՝ վարչապետ Կարէն Կարապետեանն առաջարկել է, որ ճիշդ կը լինի նախընտրական ցուցակի առաջին կին թեկնածուն լինի արդարադատութեան նախարար Արփինէ Յովհաննիսեանը՝ որպէս երիտասարդ, գրագէտ թեկնածու: Այս առաջարկը հունից հանել է ՀՀ-ական կանանց՝ մասնաւորապէս Աժ փոխխօսանակ Հերմինէ Նաղդալեանին ու Սփիւռքի նախարար Հրանտիշ Յակոբեանին, ովքեր մշտապէս գրադեցրել են ցուցակի առաջին հորիզոնականները: ՀՀ նախընտրական ցուցակի կին թեկնածուների դասաւորութեան վերջնական որոշումը դեռեւս չկայ»:

ԼՈՒՐԵՐ

Ամերիկացի վերլուծաբանի կարծիքով Լարուածուծիւնը Կ'աճի, Բայց Կողմերուն Կրնայ Մղել Բանակցութիւններու

1976-1982 թուականներուն, Մոսկուայի մէջ՝ «Financial Times» թերթի յատուկ թղթակից, 1982-ին «The Wall Street Journal»-ի՝ ԽՍՀՄ հարցերով փորձագէտ, ներկայիս Հատարն համալսարանի աւագ գիտաշխատող Տէյվիտ Սեթըր, Tert.am-ին հարցազրոյցի մը ընթացքին խօսելով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ ներկայ զարգացումներուն՝ ապրիլեան պատերազմի ու անոր հետեւող իրադարձութիւններու մասին, նկատեց, որ հիմա անհնար է իմանալ, թէ ինչ պատճառով սկսաւ ապրիլեան պատերազմը: Ան նշեց, որ հիմա արդէն կարող ենք ըսել, թէ՛ մենք կը տեսնենք, որ իւրաքանչիւր կողմ հաւատարմ պատճառ ունի, որ ռազմական ճանապարհով կրնայ բանի մը հասնիլ:



Ամերիկացի վերլուծաբան Տէյվիտ Սեթըր

«Ապրիլին ատրպէյճանցիները որոշ տարածքներ գրաւեցին, իսկ հայերը ստացան նոր սպառազինութիւն Ռուսիայէն՝ ներառեալ իսկանտէր համալիրը», - նշեց Տէյվիտ Սեթըր:

Ամերիկացի վերլուծաբանի դիտարկմամբ՝ Ատրպէյճանը պարզապէս համաձայն չէ ներկայիս հաստատուած սահմանի հետ, անոր համար ալ կը հրաժարի լրացուցիչ վստահութեան մեքենականութիւններու ներդրման գաղափարէն:

Անդրադառնալով՝ քննարկուող թեմային, թէ Ռուսիա գերիշխող ազդեցութիւն ունի ԼՂ հիմնախնդրի կարգաւորման գործընթացին, նշեց, որ իրականին մէջ Ռուսիա պարտադրուած չէ խաղաղ պահել տարածաշրջանը:

Վերլուծաբանի խօսքով՝ աշխարհը տեղեակ է Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան, գիտէ, որ ան լուրջ բռնութիւն կը պարունակէ, ըստ անոր, աշխարհը այդ հակամարտութեան կարգաւորումը կը ցանկայ տեսնել խաղաղ ճանապարհով:

Անդրադառնալով ԱՄՆ-ի դերակատարութեան՝ որպէս ԼՂ կարգաւորման գործընթացի միակ ձեւաչափը՝ ԵԱՀԿ Մինսկի խումբը համանախագահ երկիր, նկատեց, որ ԱՄՆ-ը կը ցանկայ համագործակցիլ եւ՝ Հայաստանի, եւ՝ Ատրպէյճանի հետ՝ առերեսուելով տարածաշրջանի խնդրի հետ:

ԼՂ հիմնախնդրի կարգաւորման գործընթացի ապագայի մասին ամերիկացի վերլուծաբանը դժուարացաւ գոչակել. «Դժուար է կանխատեսել, թէ ինչ կը պատահի: Լարուածութիւնը կ'աճի, բայց ան կրնայ երկու կողմերուն մղել, որ ձեռնարկեն բանակցութիւններու»:

Ռուսիա, ԱՄՆ-ը եւ Ֆրանսա Կոչ Ըրած Են Ալիելին Եւ Սարգսեանին Վերադառնալ՝ Բանակցութիւններու Սեղան



Անցեալ շաբաթ Համպուրկ մէջ կայացած ԵԱՀԿ նախարարական հանդիպման Մինսկի խումբի համանախագահ երկիրներու պատուիրակութիւններու ղեկավարները՝ Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լավրով, Միացեալ Նահանգներու պետական քարտուղար ձոն Քերրի եւ Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Ժան-Մարք Էրո յայտարարութիւն մը տարածած են, նշելով, որ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիելը պէտք է «ճկունութիւն ցուցաբերեն եւ վերադառնան բանակցութիւններու սեղան»:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լավրով, Միացեալ Նահանգներու պետական քարտուղար ձոն Քերրի եւ Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Ժան-Մարք Էրո յայտարարութիւն մը տարածած են, նշելով, որ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիելը պէտք է «ճկունութիւն ցուցաբերեն եւ վերադառնան բանակցութիւններու սեղան»:

«Եթէ բանակցութիւններու ընթացքին յառաջընթաց չարձանագրուի, նոր բախումներու հաւանականութիւնը պիտի շարունակէ աճիլ, եւ կողմերը պիտի կրեն անոր ամբողջ պատասխանատուութիւնը», - գոչակեց Սերկէյ Լավրովը: Անոնք գնահատականներ հնչեցուցած են ապրիլեան իրադարձութիւններուն վերաբերեալ. «Այս հակամարտութիւնը ռազմական լուծում չունի, եւ քաղաքացիական անձանց շրջանակէն ներս գոհներու եւ վիրաւորներու համար որեւէ արդարացում չկայ: Մենք նաեւ տեղեակ ենք ապրիլին մարտի դաշտին մէջ տեղի ունեցած վայրագութիւններուն մասին եւ խստագոյն կը դատապարտենք զանոնք»:

Պաքուի Կողմ «Երկաթ Գմբէթ»-ի Ձեռքբերումը Վտանգաւոր Ե Ամբողջ Կովկասի Համար

Բացառուած չէ, որ Ատրպէյճանը շուտով իսրայէլէն ձեռք բերէ «Երկաթ Գմբէթ» հակահրթիռային պաշտպանութեան համակարգը: Այս մասին յայտարարեց Միջազգային յարաբերութիւններու եւ անվտանգութեան հարցերու հիմնարկի ղեկավար Ստեփան Սաֆարեանը:



Անոր խօսքով՝ չնայած «Երկաթ Գմբէթ» հակահրթիռային պաշտպանութեան համակարգ գմբէթ» չէ՞ղ-ն պաշտպանութեան համակարգ գնելու մասին տեղեկութիւնը պաշտօնապէս չէ հաստատուած, իսրայէլական լրատուամիջոցները գայն չեն հերքած: «Տուեալ դէպքում անհանգստութիւն է յարուցում ոչ միայն Հայաստանի առումով, այլեւ ամբողջ կովկասեան տարածաշրջանի», - նշեց փորձագէտը:

«Երկաթ Գմբէթ» հակահրթիռային պաշտպանութեան համակարգ մէջ, իսկ այժմ մտածում են, ինչ անել դրա հետ», - եզրափակեց փորձագէտը:

Սաֆարեան, իսրայէլի վարչապետ Բենիամին Նաթանիաուի Պաքու այցելութիւնը մեկնաբանելով, ըսաւ թէ Հայաստանը Ատրպէյճանին եւ իսրայէլին պէտք է թոյլ տայ այդ քան խորացնել երկկողմ համագործակցութիւնը:

Անոր խօսքով՝ այդ համագործակցութեան հետեւանքները Հայաստան իր վրայ զգացած է քառօրեայ պատերազմի ժամանակ, երբ Պաքուն գործի դրած էր իսրայէլէն գնած անօդաչու սարքերը:

Շարմազանով՝ Մեզ Վերահսկիչներ Պէտք Զեն, Մեզ Պէտք Են Օժանդակողներ

Ամերիկահայ ռոք երաժիշտ Սերժ Թանկեանը, գանատահայ բեմադրիչ Ատոմ Էկեանն ու անոր կինը՝ դերասանուհի Արսինէ Խանձեանը որոշած են յաջորդ տարի Ապրիլին կայանալիք խորհրդարանական ընտրութիւններուն ժամանակ դիտորդական առաքելութիւն իրականացնել՝ նպաստելու Հայաստանի ժողովրդավարական եւ թափանցիկ ընտրութիւններու կայացումը:

Հանրապետական այլ պատգամաւոր, խորհրդարանական խմբակցութեան ղեկավար՝ Վահրամ Պաղտասարեանը նշած է. «Ես չեմ մտածում, որ պէտք է լինեն ընտրակեղծիքներ: Այդ իսկ պատճառով մենք մտածում ենք՝ ինչքան այցելուները շատ լինեն, այդքան լաւ: Մեզ համար դա աւելի օգտակար է, աւելի ձեռնտու է, որ նրանք բոլորը այստեղ ներկայ լինեն եւ ինչքան հնարաւոր է շատ ընտրատարածքներում, շատ տեղամասերում ներկայ լինեն: Բնականաբար ողջունում ենք այդ քայլը: Բայց իրենք դիտորդի կարգավիճակով, առանց միջամտութիւնների, առանց որեւէ... Ընտրութիւնների օրը կարող է նմանատիպ մարդիկ, նաեւ դիտորդները չկարողանան իրենց զսպել եւ քարոզարշաւի ձեւով, ինչ-որ ձեւով իրենք իսկ խոչընդոտեն այդ ընտրութիւններին: Մենք պէտք է կոչանենք, որ բոլորը իրենց առաքելութիւնները կիրառեն իրենց իրաւունքների սահմաններում»:

Ֆրանսայի ՆԳ Նոր Նախարարը Ատրպեյճանի «ՍԵԼ Ցուցակին» Մէջ Է

Ֆրանսայի ներքին գործերու նորանշանակ նախարար Պրուևո Լը Ռուի անունը ընդգրկուած է անցանկալի անձանց՝ պաշտօնական Պաքուի ցուցակին մէջ, APA լրատուական գործակալութեան յայտնած է Ատրպեյճանի արտգործնախարարութեան մամլոյ ծառայութեան ղեկավար Հիքմէթ Հաճիբեր:

Ան պարզաբանած է, որ Լը Ռուին որպէս Ֆրանսայի խորհրդարանի պատգամաւոր 2015-ի սեպտեմբերին «ապօրինի այց» կատարած է Լեռնային Ղարաբաղ:

APA-ն նշած է նաեւ, որ Ֆրանսայի ներքին գործերու նոր նախարարը Ֆրանսա-Արցախ բաբեկամութեան խումբի անդամ է:



Յիշեցնենք, որ Ֆրանսայի ՆԳ նախկին նախարար Պրուևո Գազնիով, նշանակուած է վարչապետ՝ Մանուէլ Վալսի հրաժարականէն ետք:

Երկրաշարժի Զետեւանքով Քանդուած Գիւմրին 28 Տարի Անց Վերականգնած է

1988-ի աւերիչ երկրաշարժէն 28 տարի անցած է: Ըստ «Շիրակ» կեդրոնի տնօրէն Վահան Թումասեանի՝ երկրաշարժի հետեւանքով քանդուած Գիւմրի քաղաքը 28 տարի ետք դեռ վերականգնած չէ:

Անոր խօսքով՝ բնակարանային համալիրները մեծ մասամբ վերականգնուած են, բայց այսօր դեռ 3 հազար ընտանիքներ կ'ապրին ժամանակաւոր կացարանի կամ խարխուղ վակոն-տնակներու մէջ:

«Կառավարութեան պատկերացումները բնակարանային համալիրի վերականգնման մասին իրարից տարբերուում են մի հասկանալի պատճառով՝ կառավարութիւնն ինքը որոշակի պահանջներ է ներկայացրել, որոշումներ է կայացրել եւ ասում է՝ «այս պահանջներին համապատասխանող ընտանիքներին մենք համարում ենք

շահաւու եւ փոխհատուցում ենք»:

Բայց կան ընտանիքներ, որոնք թէեւ կառավարութեան սահմանած նորմերի մէջ չեն մտնում, բայց նրանք անմիջական երկրաշարժի հետեւանքով աղէտեալ, անօթեւան դարձած ընտանիքներ են: Ասէք, եթէ պետութիւնը բազմաբնակարան շէնքից կորցրած բնակարան ընտանիքին է փոխհատուցում, բայց սեփական բնակարան կորցրածին չի փոխհատուցում, ասենք՝ մինչեւ սահմանուած ժամկետում փաստաթղթեր ներկայացրած ընտանիքին փոխհատուցում է, միւսներին չի փոխհատուցում, եթէ մէկը չի հասցրել ժամանակին բոլոր պահանջուող փաստաթղթերը ներկայացնել, չի նշանակում, թէ ինքը երկրաշարժից բնակարան չի կորցրել եւ անօթեւան չէ», - ըսաւ Թումասեան:

Պէտք է Պատրաստ Ըլլալ

Շարունակուած էջ 1-էն

գորքը, եւ՝ բնակչութիւնը, եւ՝ ԼՂՀ քաղաքացիներն արդէն պատրաստ պէտք է լինեն մի դժուարին ժամանակահատուած անցկացնելու», - ըսած է Սերժ Սարգսեան:

ԼՂ հակամարտութեան հարցով Հայաստանի ու Ատրպեյճանի նախագահները այս տարի հանդիպած են երկու անգամ, վերջին հանդիպումը կայացած է

մօտ 6 ամիս առաջ, ՌԴ նախագահ Վլադիմիր Փութինի նախաձեռնութեամբ, Սան Փետերսպուրկի մէջ:

Հայաստանի նախագահը Լեռնային Ղարաբաղ եւօրեայ այցի ընթացքին եղած է սահմանափակ վրայ, այցելած է զօրամասեր եւ Պաշտպանութեան Բանակի հրամանատարական կազմի հետ ունեցած է շարք մը խորհրդակցութիւններ:

Սամանթա Փաուլըի 3այտարարութիւններուն Շուրջ

Շարունակուած էջ 1-էն

նը, յիշեցնելով Հայոց ցեղասպանութիւնը ԱՄՆ-ի կողմէն պաշտօնապէս ճանչցուելու գործը Գոնկըրեսին մէջ Հայկական հարցերով յանձնախումբի աշխատանքներուն մասին, ըսած է. «Շատերը կը հաւատան, որ Գոնկըրեսն ու երկրի նախագահը օր մը պիտի ճանչնան Հայոց Յեղասպանութիւնը եւ ես շատ գոհ եմ, որ Սամանթա Փաուլըրը հանդէս եկաւ այդ յայտարարութեամբ»:

«Հերքողական պատի մէջ անցք բանալու» մասին խօսած է նաեւ Հայաստանի մէջ ԱՄՆ-ի նախկին դեսպան ձոն Էվընսը՝ յիշեցնելով «Խնդիր՝ Դժոխքէն» խորագրեալ փառերի գիրքին մասին, որ կը սկսի Հայոց Յեղասպանութեան մասին պատմելով:

«Ես մեծ յարգանք կը տածեմ

անոր նկատմամբ, որպէս գիտնական ու հրապարակախօս: Սակայն ան, այլ դեր կատարեց անցեալ տարիներուն որպէս ՄԱԿ-ի մէջ ԱՄՆ-ի դեսպան: Բայց ի վերջոյ կրցաւ դատապարտել անհերքելի փաստերու հերքումը», - ըսած է ձոն Էվընսը:

Ըստ «Նիւ Եորք Թայմզ»-ի յօդուածին, «ԱՄՆ-ի նախկին նախագահ ձիմի Քարթըրը 1978-ին գրեթէ մօտեցած էր «ցեղասպանութիւն» եզրին, երբ յայտարարած էր, թէ «նպատակաւորաբար ջանք կիրառուած է ամբողջ հայ ժողովուրդը ջնջելու համար: Ռոնըյտ Ռէյկան, 1981-ին արտասանած էր «Հայերու ցեղասպանութիւն» բառակապակցութիւնը՝ դառնալով ԱՄՆ-ի մինչ այժմ վերջին նախագահը, որ հայերու դէմ իրականացուած ջարդերը ճանչցած է, որպէս՝ Յեղասպանութիւն:

Տիարպէրի մէջ Սուրի Թաղապետարանի Շէնքէն Զեռացուած Է Զայերէն Ցուցանակը



Տիարպէրիի Սուր քաղաքապետարանի շէնքի վրայ քառալեզու՝ թուրքերէն, քրտերէն, հայերէն եւ ասորերէն ցուցանակ է եղել, որը քաղաքապետարանում պետութեան կողմից նշանակուած վերահսկիչի հրամանով փոփոխութիւնների է ենթարկուել: Փոփոխութիւններից յետոյ ցուցանակի վրայ բացակայում են հայերէն եւ ասորերէն գրութիւնները, փոխարէնը՝ թուրքական դրօշ է աւելացուել:

2012թ. Սուրի քաղաքապետարանը «բազմալեզու քաղաքապետարան» ստեղծելու որոշում է կայացրել, որից յետոյ քաղաքապետարանում օգտագործուող թուրքերէն «անգլերէնին աւելացել են

նա՝ քրդերէնը, հայերէնը, արաբերէնն ու ասորերէնը: Որոշման համաձայն նշուած լեզուներով ցուցանակներ էին տեղադրուել 33 քաղաքակրթութիւնների կենտրոն հանդիսացող Սուրի մի շարք հատուածներում:

Թուրքիայի ՆԳՆ Սուրի քաղաքապետարանի կողմից պատրաստուած բազմալեզու ցուցանակի առնչութեամբ քննութիւն էր սկսել՝ պատճառաբանելով, որ քաղաքապետարանը շատ դրամական միջոցներ է ծախսում բազմալեզու ցուցանակի համար: Հետաքննութիւնը դադարեցուել էր, երբ յայտնի էր դարձել, որ ցուցանակը քաղաքապետարանի արհեստանոցում է պատրաստուել:

Տիարպէրիի Զայկական Եկեղեցիները Պիտի Վերանորոգուին



Տիարպէրիի մէջ մեծ աւերածութիւններու ենթարկուած հայկական եկեղեցիները պիտի վերանորոգուին: Այս մասին կը յայտնէ «Անտոլու» լրատուական գործակալութիւնը, որ նոյնպէս կը փոխանցէ, որ Սուր թաղամասին մէջ գտնուող երկու հայկական եկեղեցիները կրած են խոշոր վնասներ: Այդբար կը փոխանցէ, որ այդ վերանորոգումներու ծախսերը պիտի հոգայ՝ Թուրքիոյ հիմ-

նադրամներու գլխաւոր վարչութիւնը, որ 40 միլիոն լիրայի (մօտ 12 միլիոն տոլար) հասնող պիւտձէ մը նախատեսած է այդ աշխատանքներու իրականացման համար:

Վերակառուցման արդիւնքով պիտի պահպանուի եկեղեցիներու նախնական տեսքը: Գործակալութիւնը նաեւ փոխանցած է, որ վերանորոգման աշխատանքները ընթացք առած են եւ անոնք պիտի տեսնեն երկու տարի:

Գոնկրէսական Ատամ Շիֆ Մտահոգուած

Շարունակուած էջ 1-էն

Գալիք ամերիկեան վարչակազմի յետագայ դիրքորոշման վերաբերեալ, յատկապէս Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցով, գոնկրէսական մտահոգութիւններ յայտնած է՝ Հայաստանի եւ ամերիկահայ համայնքի վերաբերող հարցերուն շուրջ: Ան ըսած է, թէ նորընտիր նախագահ Տոնայտ Թրամփի ու անոր խումբի որոշ անդամները սերտ գործակալական կապեր ունին Թուրքիոյ հետ, որ բացասաբար կրնան անդադառնալ ԱՄՆ-ի հայկական օրակարգին վրայ:

Գոնկրէսականի կարծիքով՝

Թուրքիոյ նկատմամբ առկայ հետաքրքրութիւնը յատկապէս դրսեւորուեցաւ Ֆեթհուլլահ Կիւլէնի հետ կապուած հարցով, երբ առանց լուրջ հիմնաւորումներու, Թրամփի խումբի որոշ անդամներ կոչ ըրած էին ԱՄՆ-ին, Կիւլէնը՝ յանձնել Թուրքիոյ:

Հարցազրոյցի ընթացքին գոնկրէսական Շիֆ անդադարեցած է նաեւ սուրիական ճգնաժամին, քննադատութեան ենթարկելով Ռուսիոյ դերակատարութիւնը այս հակամարտութեան մէջ, որ ուժեղացուցած է Պաշար Ասատի դիրքերը ու համոզած անոր, որ այս հակամարտութիւնը հնարաւոր է լուծել ռազմական ճանապարհով:

ԱՄՆ Դեսպան - ՀՀ-ն Կրնայ Հպարտանալ իր Քաղիասարակութեամբ

Հայաստանը կրնայ հպարտանալ իր քաղաքացիական հասարակութեամբ, որ կը բացակայի դրացի երկիրներէն շատերուն մէջ: Այս մասին 9 Դեկտեմբերին, Մարդու իրաւունքներու միջազգային օրուան կապակցութեամբ (10 Դեկտեմբեր) իր յատարարութեան մէջ նշած է ՀՀ-ի ԱՄՆ դեսպան Ռիչըրտ Միլըրը:

Ան, մասնաւորապէս, նշած է. «1948-ին, այս օրը ՄԱԿ-ի Գլխաւոր ժողովի կողմէն ընդունուեցաւ Մարդու իրաւունքներու մասին համընդհանուր հռչակագիրը՝ շրջադարձային փաստաթուղթ, ուր առաջին անգամ առանձնացուեցան մարդու հիմնարար իրաւունքները, որոնք պէտք է պաշտպանուին բոլոր երկիրներուն մէջ, բոլոր պետութիւններուն կողմէ: Մարդու իրաւունքներու խթանումը ԱՄՆ կառավարութեան արտաքին քաղաքականութեան առանցքային տարրերէն է, եւ մենք ամէն օր կ'աշխատինք առաջ մղել հիմնարար իրաւունքներն ու ազատութիւնները բոլորին համար:

Այսօր, երբ մենք կը նշենք Մարդու իրաւունքներու միջազգային օրը, կ'ուզէի անդրադարձ կատարել մարդու իրաւունքներու իրավիճակին Հայաստանի մէջ: Նախ, կ'ուզեմ գովեստով արտայայտուիլ այս հարցով Հայաստանի կառավարութեան ունեցած առաջընթացի մասին: Հայաստանը կրնայ հպարտանալ իր աշխուժ քաղաքացիական հասարակութեամբ, յատկապէս՝ մարդու իրաւունքներու պաշտպանութեան ոլորտին մէջ. այս կայացած իրողութիւն է Հայաստանի մէջ, որ, ցաւօք, կը բացակայի Հայաստանի դրացի երկիրներէն շատերուն մէջ: Ես կ'ուզեմ առանձնակի ողջունել Հայաստանի կառավարութեան ու քաղաքացիական հասարակութեան միջեւ համագործակցութեան մեծացումը: Օրինակ՝ Պաշտպանութեան նախարարութեան նորաստեղծ Մարդու իրաւունքներու ու բարեփոխութեան կեդրոնը քաղաքացիական հասարակութեան ներգրաւած է գլխեւ ուժերու մէջ մարդու իրաւունքներու, բարոյագիտութեան, բարեփոխութեան ու կաշառակերութեան դէմ պայքարին միտած աշխատանքներուն մէջ:

Քննչական կոմիտէն ընտանեկան բռնութեան ուղղուած հարցերուն կը համագործակցի հասարակական կազմակերպութիւններու հետ եւ իրականացուցած է լուրջ ներքին ուսումնասիրութիւն, որուն միջոցով կ'ապահովուին ընտանեկան բռնութեան դէպքերու ու իրաւապահներու կողմէն այդ գործերու վառման վերաբերեալ շատ անհրաժեշտ տուեալներ:

Երրորդ, կ'ուզեմ նշել այն գնահատելի աշխատանքը, որ կը կատարէ Մարդկանց մաքսանենգութեան հարցերով միջգերատեսչական աշխատանքային խումբը, որ մաքսանենգութեան կրճատման նպատակով յաջողութեամբ կը մէկտեղէ քաղաքացիական հասարակութեան, կառավարութեան ու

իրաւապահ կառույցներու ջանքերը: Այս ջանքերը ուղղակիօրէն յազնցուցած են անոր, որ ԱՄՆ պետքարտուղարութեան ամէնամեայ գնահատումներուն մէջ Հայաստանը արդէն 4 տարի անընդմէջ տեղ կը գտնէ 1-ին խումբի երկիրներու շարքին, որ ուշագրաւ ձեռքբերում է: Իրաւունքի գերակայութեան ու դատարարական համակարգի ամրապնդման հարցով անկախացումէն ի վեր Հայաստանը նշանակելի քայլերու ձեռնարկած է, սակայն նախնական կալանքի կիրառման հարցը կը շարունակէ մնալ մտահոգիչ: Դատարարական գործընթացին նախնական կալանքը կարեւոր նշանակութիւն ունի, բայց ժողովրդավա-

րական հասարակարգի մէջ այն պէտք է աւելի շատ կիրառուի որպէս բացառութիւն եւ ոչ որպէս կանոն եւ միայն որպէս ծայրայեղ միջոց այն դէպքերուն, երբ կիրառելի կամ նպատակայարմար չեն խափանման միւս այլընտրանքները, որոնք կը կանխեն մեղադրեալի փախուստը, վերջինիս կողմէ այլոց վնաս պատճառելը եւ քննութեան ընթացքը խոչընդոտելը: Նախնական կալանքը պէտք է կիրառել որպէս պատժիչ գործիք, որով քաղաքացիներուն թոյլ չի տրուիր իւրացնել խօսքի ու հաւաքներու իրենց ազատութիւնը:

Նախնական կալանքի մասին որեւէ որոշում պէտք է ըլլայ ամբողջովին թափանցիկ, եւ բոլոր որոշումները պէտք է ամուր իրաւական հիմնաւորումներ ունենան, ինչպէս պահանջուած է միջազգային չափանիշներով, եւ այդ յատ-

կապէս կը կարեւորէ քաղաքական առումով զգայուն գործերու պարագային կամ այն ժամանակ, երբ կալանքի մասին որոշումը երկար ժամկէտով անազատութեան մէջ կը յայտնուին կառավարութեան ընդդիմադիրները կամ քաղաքացիական ակտիվիստները: Կալանքի բոլոր դէպքերուն մէջ կառավարութիւնը պարտաւոր է հոգ տանիլ այդ անձանց մարդու իրաւունքներու պաշտպանութեան համար: Այն պարագային, երբ նախնական կալանքի կիրառումը արդարացուած է, մենք իշխանութիւններու ուշադրութիւնը կ'ուզէինք հրաւիրել մարդասիրական հետեւանքներուն եւ ընտանիքի անդամներու ու փաստաբաններու հետ կայուն ընթացակարգային պահանջներու հիման վրայ տեսակցութիւն պահանջելու ու ստանալու իրաւունքի երաշխանորման:



ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ԾԱԵԿԵՐՈՅԹ

Կազմակերպութեամբ՝ ԱՐՍԷՆ ԿԻՏՈՒՐ ՄԱՍՆԱՃԻՂԻ

Շաբաթ, Դեկտեմբեր 31, 2016

Երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ

Հ.Մ.Ս.ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ

New Year's Celebration

Presented by

ARSEN GIDOUR CHAPTER

Saturday, December 31, 2016

Starting at 8:00 p.m.

HMM Garo Soghanalian Hall – 1060 N. Allen Ave., Pasadena

Live Entertainment by Khachig Zanian with a special visit from Santa Clause

Մուտքի Լուր / Admission: \$65.00 • Children 6-12: \$30.00 • 5 & Under Free
Տոմսերու համար դիմել / For Reservations Call: Avo Mazmanian (818) 913-9311

Օ»ñ Ì ³ YáóóáóUÝ»ñÁ
ì ëì ³ Ñ»óçì
«Մասիս»
Շաբաթաթերթին

ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԸ ՈՒՆԵՑԱՒ ՅԱԶՈՂ 13ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԽՐԱԽԾԱՆՔԸ



Աւելի քան 400 հիւրերը Շաբաթ, Դեկտեմբեր 3ի գիշերը ներկայ գտնուեցան Առաջնորդարանի Նազարէթ եւ Սիմա Գալայճեան Սրահին մէջ կազմակերպուած 13րդ Տարեկան Սուրբ Ծննդեան Խրախճանքին: Այս տարուան վայելուչ բնաբանն էր «Առաջնորդուեցէք հաւատքով»: Յնձութեան լոյսերը կը փայլէին, երբ իրախճանքը սկսաւ երեկոյեան ժամը 7ին՝ հիւրասիրութեամբ եւ կաղանդի ծառերու լուսաւորումով Առաջնորդարանի Թրբանճեան Հրապարակին վրայ: Հիւրերը համախմբուեցան գեղեցիկ կերպով զարդարուած ծառերուն շուրջ, ուր Խրախճանքի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի հանդիսապետութեամբ կատարուած յատուկ աղօթքով: Ապա հիւրերը մուտք գործեցին «Փոլ Եղբայրներ» կալերիային ներս, ուր տեղի ունեցաւ ընկերային հաւաքն ու թեթեւ հիւրասիրութիւնը: Այնուհետեւ բարի գալստեան ընթրիքն ու յայտագիրը տեղի ունեցաւ Գալայճեան Սրահին մէջ:

Սուրբ Ծննդեան Խրախճանքի ուրախ արտայայտութիւնը կատարուեցաւ ի յարգանս իրենց մասնագիտական ասպարէզներուն մէջ յաջողութիւն արձանագրած եւ հայ համայնքին ու Ամերիկեան համայնքին իրենց թանկագին ծառայութիւնները մատուցած հայրերին:

Սուրբ Ծննդեան Խրախճանքի Յանձնախումբի Ատենապետ՝ Ռաֆֆի Քենտրիճեան իր երախտագիտութիւնն ու գնահատութիւնը յայտնեց բոլոր հիւրերուն, որոնք եկած էին իրենց յարգանքը մատուցանելու այս տարուան 12 հայրերին: Երբ որոնք իրենց մասնագիտական ծառայութիւններով մեծապէս օգտակար հանդիսացած էին հայ եւ Ամերիկեան համայնքներուն: Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ նաեւ Թեմակալ Խորհուրդի Ատենապետ՝ Տիար Ժողէֆ Կանիմեան:

Իր խօսքին մէջ Առաջնորդ Սրբազան Հայրը մեծապէս գնահատեց Սուրբ Ծննդեան Խրախճանքի Յանձնախումբին կազմակերպած հիւանալի ձեռնարկը՝ Ատենապետութեամբ Ռաֆֆի Քենտրիճեանին: Սրբազան Հայրը նոյնպէս իր երախտագիտութիւնը յայտնեց բոլոր նուիրատուներուն, ապա իր ողբերգիչ պատգամը փոխանցեց հիւրերուն՝ շնորհաւորելով անոր Նոր տարին եւ Սուրբ Ծնունդը:

Հիւրերը վայելեցին տեսներիզը պատուի արժանացած 12 հայրերին: Երբ որոնք արտայայտուեցան իրենց ընտրած ասպարէզներուն մասին: Այս տարուան պատուի արժանացողներն էին Դոկտ. Սքաթ Ա. Ասմար, Նազ Աթիկեան, Տոքթ. Արա Պալլքեան, Տոքթ. Էլիին Բաղդասարեան-Բարիսուդարեան, Ալէքսիս Կէորգեան, Ռէյ Յարթունեան, Սիլվա Քաշիկեան, Ատամնաբոյժ Կարօ Գէորգեան, Իրաւաբան Գառնիկ Քէօրքիւնեան, Գարին Մուշեկէյն, Տոքթ. Գէորգ Մութաֆեան եւ Իրաւաբանուհի Թինա Օջաղեան: Նախորդ տարիներուն պատուի արժանացած հայրերին մասնակցեցան այս տարուան պատուի արժանացողները ներկայացնելով: Ապա իւրաքանչիւր պատուի արժանացող Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ ստացաւ յատուկ վկայագիր եւ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՐԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ «ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ԼԱԲԱԳՈՅՆԸ» ՏՕՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԳԸ



Ուրբաթ, Դեկտեմբեր 2-ին Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութիւնը (ԱՀԱԸ) ներկայացուց Ծնունդի նուիրուած յատուկ Տօնական Համերգ մը Բըրէյմսի Հայ Աւետարանական Եկեղեցիին մէջ: Համերգի գեղարուեստական ղեկավարն էր Վաղարշակ Օհանեան, որուն կէ' ընկերակցէին երգչուհիներ Անահիտ Զաքարեան, Ալվարդ Մայիլեան, դաշնակահար Էվկէնի Նինով, ինչպէս նաեւ Արմինադրինկա Նուազախումբը եւ Համազգայինի Արեգակ Պատանեկան Երգչախումբը:

Հանդիսատեսները մեծապէս որգեւորուած էին լսելով տօնական օրերու աւանդական եւ Սուրբ

հայկական զարդարուած տուֆէ խաչքար մը առ ի գնահատութիւն համայնքին ներս իրենց մատուցած նուիրեալ ծառայութիւններուն: Սրբազան Հօր կողքին կանգնած էին Յանձնախումբի Ատենապետ՝ Ռաֆֆի Քենտրիճեան, Գոնկրէսմէն Ատամ Շիֆի եւ Թեմակալ Խորհուրդի Ատենապետը:

Իր խօսքին մէջ Առաջնորդ Սրբազան Հայրը շնորհաւորեց պատուի արժանացած հայրերին՝ շնորհակցելով անոնց ունեցած նուիրումն ու ժրջանութիւնը իրենց մասնագիտական ասպարէզէն ներս, որոնց շնորհիւ արձանագրած էին փայլուն յաջողութիւններ՝ ներշնչուած պատճառելով ապագայ սերունդներուն եւ հպարտութիւն՝ հայ համայնքի կողմէ ճանաչուած ստանալու եւ գնահատուելու: Երբ իւրաքանչիւր պատուի արժանացող հայրերին մօտեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր՝ վկայագիր

Ծննդեան երգեր, ինչպէս «Մհ Սուրբ Գիշեր»: Յայտագիրը նաեւ ճոխացած էր Կոմիտասով եւ այլ Հայրենասիրական երգերով: Համերգի աւարտին Համազգայինի Արեգակ Պատանեկան Երգչախումբը ներկայացուց հայերէն լեզուով «Լուս Գիշեր, Սուրբ Գիշեր» Ծնունդի երգը, յուզելով ներկաներէն շատեր:

1990-էն ի վեր ԱՀԱԸ-ը եւ Հայաստանի Աւետարանական Եկեղեցին կը կազմակերպեն Ծնունդի յատուկ յայտագիրներ Հայաստանի եւ Ղարաբաղի մէջ, բաժնեկցելով Աստուծոյ սէրը: Սոյն համերգէն գոյացած եկամուտը պիտի յատկացուի Ծնունդի այլ ծրագիրներուն:

ստանալու, ներկաները եւ իրենց ընտանեկան պարագաները ուրախութեամբ եւ ծափահարութեամբ ողջունեցին գիւրեմք: Պատուի արժանացողները յատուկ Գնահատագիրներ ստացան նաեւ Գոնկրէսմէն Ատամ Շիֆի կողմէ, որ անձամբ շնորհաւորեց գիւրեմք:

Այս առթիւ տպագրուած էր յատուկ գրքոյկ մը, որ կը բովանդակէր պատուի արժանացողներուն նկարներն ու կենսագրութիւնները, ինչպէս նաեւ պատգամներ եւ շնորհաւորական բարեմաղթութիւններ իրենց ընտանիքներուն եւ բարեկամներուն կողմէ: Գրքոյկին մէջ կը պարունակէր նաեւ նկարներ եւ յիշատակներ 12րդ Տարեկան Սուրբ Ծննդեան Խրախճանքէն, ինչպէս նաեւ 2016 թուին Առաջնորդարանի եւ գնահատան յանձնախումբերու կողմէ կատարուած գործունէութիւններուն:

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեղտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ԼԻԲԱՆԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ-ԶՐՈՅՑ «ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓԻՒՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՆԵՐ»



Կազմակերպութեամբ «Արարատ» օրաթերթի տնօրէնութեան, Զորքաբերի 7 Դեկտեմբեր 2016-ին, Ռեմէյլի Սք. Յարութիւն եկեղեցւոյ «Յովհաննէս եւ Վարդուհի Պէտրոսեան» սրահին մէջ տեղի ունեցաւ հանդիպում-գրոց Լիբանանի մօտ Հ.Հ. արտակարգ եւ լիազօր դեսպան Պրն. Սամուէլ Մկրտչեանի հետ «Հայրենիք-Սփիւռք Համագործակցութեան Ուղիներ» նիւթին շուրջ:

Հանդիպման ներկայ էին Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ պետական երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալստիսեան, Հ.Հ. արտակարգ եւ լիազօր դեսպան Պրն. Սամուէլ Մարտիրոսեան, հիւպատոս Պրն. Աշոտ Վարդանեան եւ դիւանագիտական աձնակազմը, Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տէր եւ Տիկ. Ընկ. Տոքթ. Եղիկ Ճէրէճեան, Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինի ատենապետ Ընկ. Տոքթ. Մարտիկ Ժամկոչեան եւ անդամներ, Հ.Կ.Բ.Մ.-ի ատենապետ եւ Պէյրութի քաղաքապետութեան անդամ Պրն. Արամ Մալեան, Ռեմէյլի Սք. Յարութիւն եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տէր Դեւոնդ քհնյ. Լոյսաճեան, ինչպէս նաեւ մասնաճիւղերու, միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ «Արարատ» օրաթերթի շուրջ համախմբուած բազմաթիւ բարեկամներ: Լիբանանեան եւ հայկական գոյգ քայլերգներու ունկնդրութենէն ետք, «Արարատ» օրաթերթի տնօրէնութեան Ընկ. Անի Եփրեմեան խոր ապրումով ասմունքեց 1988 թ.-ին Դեկտեմբեր 7-ին ահաւոր երկրաշարժին նուիրուած քերթուած մը՝ որմէ ետք հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ յարգելու անոնց յիշատակը:

Բացման խօսքին մէջ ան նշեց, թէ «Արարատ» օրաթերթը կը վերսկսի իր գրոցներուն, եւ աւելցուց, թէ այսօրուան եզակի եւ իւրաքանչիւր հանդիպումով բացումը կը կատարէ այդ գրոցներուն:

Ան իր խօսքին մէջ նշեց թէ՛ հերոսներ ծնած հայ ժողովուրդը ամէնէն անհաւասար մարտերէն իսկ դուրս եկաւ ճակատաբաց ու հպարտ, հերոսական մահով անմահացող փառանքին շնորհիւ: Իրականացաւ հայուն երազը եւ հայ ժողովուրդը դարձաւ իր սեփական ճակատագիրին տէրը, աւելցնելով թէ այսօր, անկախ Հայաստանը 25 տարեկան է: Ան ըսաւ, թէ այսօրուան դրութեամբ Հայաստան, Արցախ եւ Սփիւռք միասնաբար պէտք է լա-

րեն իրենց ուժերը եւ բոլոր ժամանակներէ աւելի դառնան միասնակամ եւ միասնական: Հայու հայրենիքը ներկայի ու ապագայի միակ յուսալից ու յուսատու ապակէն է: Խօսքին ետք ցուցադրուեցաւ տեսաերիզ մը, ուր ներկայացուեցան Սեպտեմբերի 21-ին, Երեւանի հրապարակին վրայ տեղի ունեցած շքերթէն բաժիններ ոգեւորելով ներկաները, ուր հերոսական հայոց բանակը կը տողանցէր խրոխտ քայլերով եւ կը ցուցադրուէին գերարդիական հրթիռները: Տեսաերիզին կ'ընկերակցէին ազգային հայրենասիրական երգեր:

Յայտագիրի ընթացքին գեղարուեստական բաժինով իրենց մանակցութիւնը բերին տաղանդաւոր երիտասարդներ, որոնք իրենց կատարումներով արժանացան ներկաներուն՝ զնահատանքին: Այլք Տօնէրեան՝ Չութակ, Գէորգ Քէշիշեան՝ տուտուկ եւ Գէորգ Քէօշկերեան՝ տնջ:

Հպարտ եւ խրոխտ մթնոլորտին ներքեւ, Տիկ. Անի Եփրեմեան հրաւիրեց Հ.Հ. արտակարգ եւ լիազօր դեսպան Պրն. Սամուէլ Մկրտչեանը, շնորհակալութիւն յայտնելով որ սիրով ընդառնեց «Արարատ» օրաթերթի հրակէրին:

Պարոն Մկրտչեան իր դասախօսութեան սկիզբը յայտնեց, թէ նաեւ պիտի յայտնէ իր անձնական կարծիքը Հայրենիք-Սփիւռք համագործակցութեան նիւթին շուրջ: Ան ըսաւ որ, երբ կը խօսի հայութեան մասին կը նախընտրէ օգտագործել «Հայկական աշխարհ» եզրը, որովհետեւ հայերը մէկ ժողովուրդ են եւ ուր ալ գտնուին, նոյն ազգային արժէքներուն կրողներն են: Հայաստան, Արցախ եւ Սփիւռք մէկ են: Հայերը միշտ ունեցած են երկու նպատակ՝ հայապահպանում եւ պետականութեան վերականգնում:

Արդէն 25 տարի է ի վեր Հայաստան անկախ է: Պետականութեան կայացման հողովութիւն մէջ Սփիւռքը շատ օգնած է Հայրենիքին: Ըստ Պարոն Մկրտչեանին, ամէն ազգ կ'ուզէ պահել եւ ամրացնել իր պետականութիւնը: Հայկական Բանակը այդ պետականութիւնը պահող կարեւոր մասնիկ է: Սփիւռքը նաեւ օգնեց Հայաստանի եւ Արցախի պայքարին: Երբ Պարոն Մկրտչեանէն խօսք պահանջուած է ուղղուած լիբանանահայութեան, «Ռատիթթն»-ին առիթով, ան ըսած է, փէ լիբանանահայութիւնը կոչի պէտք չունի, ան միշտ ցոյց տուած է իր հայրենասիրութիւնը: Ըստ Պարոն Դեսպանին, Սփիւռքը եւ Հայրենիքը կը նմանին քիմիագի-

ԼՈՆՏՈՆԻ «ԿՈՄԻՏԱՍ» ԵՐԳՉԱԽՈՒՄԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ «SAMSUNG WORLD CHOIR» ԵՐԳՉԱԽՄԲԱՅԻՆ ՀԱՄԵՐԳԻՆ



Լոնտոնի Թէյքեյան Խնամակալ Մարմնի (The Tekeyan Trust) «Կոմիտաս» երգչախումբը մասնակցեց Samsung World Choir կողմից Լոնտոնում կազմակերպուած եւ նախադէպը չունեցող ձեռնարկին՝ շարունակական համերգին բաց երկնքի տակ:

Միջոցառումը բացառիկ է եւ Անգլիայում մեծ արձագանքի է արժանացել, քանզի 24 օր շարունակ՝ մինչեւ Սուրբ Ծննդեան տօները, ամէն երեկոյ Լոնտոնի սրտում՝ Պիկադիլի հրապարակում (Piccadilly Circus), տարբեր երգչախմբեր ելոյթներով հանդէս են գալու Լոնտոնի երաժշտասէր հանրութեան, ինչպէս նաեւ զբօսաշրջիկների առջեւ:

Կազմակերպիչների կողմից համերգի վայրը պատահական չէր ընտրուած. Պիկադիլի հրապարակը հանդիսանում է Լոնտոնի ամենակարեւոր եւ ամենամարդաշատ տեսարժան վայրերից մէկը, ուր ամէն ժամ հազարաւոր այցելուներ են լինում եւ հիանում էրոսի արձանով եւ շրջապատող ճարտարապետական հրաշքերով: 6 մեթր բարձրութիւն ունեցող բեմը, որի վրայ կանգնած ելոյթ են ունենում երգչախմբերը, տեղադրուած է հենց

էրոսի արձանի շուրջ:

«Կոմիտաս» երգչախումբը (նախագահ՝ Վ. Ուզունեան, խմբավար եւ ղեկ. դեկավար՝ Ս. Օլահ) պատիւ ունեցաւ հանդէս գալու ձեռնարկի առաջին իսկ օրը եւ բացելու համերգը, փայլելով իր ինքնատիպ կատարողականութեամբ: Մէկ ժամ շարունակ հարիւրաւոր երաժշտասէրներ վայելեցին հայ դասական երաժշտութիւնը. «Կոմիտաս»-ն իր բարձր օրակներով կատարեց Ա. Դոլուխանեանի, Կոմիտասի, Ա. Տիգրանեանի, Ս. Լուսիկեանի, Ա. Աճէմեանի, Ս. Շաքարեանի, Է. Յովհաննիսեանի ստեղծագործութիւններից եւ արժանացաւ բուռն ծափահարութիւնների:

Նեղինակը կը նշէ, թէ՛ «Հայաստանի հանրաժանօթ հանքավայրերից է Ալավերդին, որ շահագործուած է 1730 թուականից: Առաջին գործարանը հիմնուած է 1770-ին, ուր օգտագործուած էին ոչ միայն պղինձ, այլեւ ոսկի, արծաթ, բիսմութ, սելեն, տելուր եւ ծծումբ»: Ըստ Նեղինակի վկայութեան շատ վարպետներ քաղաքական պատճառներով մեկնած ու իրենց գործերը տարածած են արաբական երկիրներու, հարաւային Ռուսիոյ, Բիւզանդիոյ եւ Պարսկաստանի տարածքին: «Գալեմքեարեանների գործունէութիւնը ծաւալուել էր շուրջ երկու հարիւր տարի»: Թոքմաճեան կը մատուցանէ Գալեմքեարեաններու պատմական տուեալներով հարուստ գործունէութիւնը: Կը խօսի Յակոբի, Տիրացու Մելքոնի եւ Կարապետ խալֆայի մասին: «Աւանդութեան համաձայն Գալեմքեարեանների նախահայրը՝ ղերձակ Յակոբ, եկել է Արեւելեան Հայաստանից՝ Պարսկաստանի տիրապետութեան տակ գտնուող Զուլֆա քաղաքից»: Յակոբի որդին արհեստով եղած է կլայագործ, այդ պատճառաւ ալ զայն կոչած են Գալայգը Մելքոն: Մելքոն խալֆէն եղած է տիրացու, շարականագէտ՝ գրագէտ մարդ, որուն որդիները՝ Աբէն եւ Կարապետ, եղած են խալֆէներ, այսինքն, պղնձագործութեան մէջ վարպետները փոխարինողներ: «Այնթապի առաջին կլայագործները պղնձագործներ էին: 1915-ի տեսները շատ տուներ դեռ կը գործածէին Թոքատի գործ պղնձեղէն»: Կարապետ խալֆէն եւս եղած է պղնձագործ, բայց աշխատած է ինքնեկ վարպետութեամբ եւ համբաւի տիրացած է, որպէս պղինձի վրայ փորագրող: Այստեղ Հրազդան ներկայացուցած է չիշեալ վարպետներու գործերէն լուսանկարներ՝ զարդանախշուած գաւաթ, մկրտութեան աւագան, թաս, Այնթապի Ս. Աստուածածին եկեղեցոյ (ճարտ. Պալեան) եւ Գալեմքեարեաններու աշխատանոցը՝ լուսանկարուած 2012-ին, հեղինակին կողմէ: Ներկայացուած են նաեւ 1739 արձանագրութեամբ պղինձէ նախազարդ պնակ մը, գործ՝ Արուսիի որդի Կարապետի: Նաեւ Կարապետ խալֆայի օգտագործած մուրձերուն, դալձմներուն, կարկիններուն, սալերուն կողքին, Կարապետ խալֆային ձեռագիրը՝ հայատառ թրքերէնով: Կարապետ խալֆա ինք ալ հօրը պէս եղած է շարականագէտ, վարպետ, որ պատուէրով դրուագած է Քրիստափոր Գոլոմպոսը...:

ԿԱՐԱՊԵՏԻ ՈՐԴԻ ՄԵԼՔՈՆ ՌԻՍԱ ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆԻ (1859-1918)

Մելքոնը «արհեստը հասցրեց իր բարձրագոյն մակարդակին եւ նրա պատրաստած մատանները, երկու կողքերին փորագրուած վարդի ծաղիկներն ու այլ զարդաձեւեր մեծ ընդունելութիւն են գտել»: Գիրքին մէջ կը տեսնենք նաեւ լուսանկար մը պղնձագործ վարպետներու, որոնք Համբարձման տօնին առթիւ շրջապատած են Մելքոն Ուստան: Նաեւ Ուստային պատրաստած սալերը: Մելքոնին մասին շատ պատմութիւններ կան հիւսուած: «Մեզի հասած են անոր գործերը», - կը կարդանք հեղինակին վկայութիւնը:

Մելքոն Ուստային պատրաստած գործիքներէն կը տեսնենք անոր ձեռքի գործ հատիչի մը եւ գծաքաշի մը լուսանկարը: Երբ պղնձագործ երիտասարդ մը իր գործը ուստային ներկայացուցած է գնահատական ստանալու փափաքով, վարպետը գործը լաւ մը գննելէ յետոյ, ըսած է. «Տղաս, կարկին գործածելը ամօթ է, ամօթը ծուռիկ գործ շինելն է: Գնա, կարկինդ գործածէ»: Ուստա Մելքոն կը յայտնագործէ նաեւ զօդանիւթը (լեհիմ) եւ զաղտնիքը կը փոխանցէ այլ արհեստակիցներու: Գիրքին մէջ տեղ գտած են Մելքոնին պատրաստած, Այնթապէն բերուած շաղափներն ու փքոցը, զոր կը գործածէին նաեւ ոսկերիչները, երկաթագործներն ու հիւսները: Մելքոն Ուստա-վարպետի գործերէն ջահ մըն ալ հահա՝ 19-րդ դարէն, որուն կը հետեւի նաեւ ծեծուած պղինձը կոկիլու գործիքը:

Ահա նաեւ մետաղաթերթ կտրող յատուկ մկրտա մը, կողքին՝ Մելքոն Ուստային պատրաստած կնիքը 1901 թուականէն սկսեալ, ուր կ'արձանագրուի նաեւ իր որդիին անունը՝ որպէս իր գործակից: Փաստաթուղթ մը կայ, տրուած չորրորդ բանակի հրամանատար

ձեմալ փաշային կողմէ, առ այն, որ Գալեմքեարեան Մելքոն Ուստա իր գաւակներով, ընտանեօք կրնան գործել ու բնակիլ Դամասկոսի մէջ: Կայ նաեւ օսմաներէն պատճէնը: Այնուհետեւ կը տեսնենք խմբանկար մը՝ Հալէպ, 1940, ձախէն՝ նստած ձուլագործներ, Մանուէլ Պաղտասարեան, ձախէն ոտքի՝ երկաթագործ Գէորգ Կէօլչէնեան, Յարութիւն Պարսումեան եւ զինագործ Նազար Քիւրիւմլեան: Օթել Պարոնի մէջ ձեմալ փաշա կ'ունենայ Գալեմքեարեաններու պատրաստած կրակարաններէն՝ «Փաշա Մանդալը»-ն: Կնիքը տեսնելով եւ նաեւ չիշելով անոնց պատրաստած սպասքի ամաններուն հարուստ շարքը՝ ան ներս կը հրաւիրէ Մելքոն Ուստան: Հիւրասիրութիւն: ձեմալ փաշայ կը հրաժարի ընդունիլ որպէս նուէր առաջարկուած հրաշալի կրակարանը, բայց կ'արտօնէ, որ Գալեմքեարեանները բնակին Դամասկոս, ուր 1905-էն հաստատուած այնթապցի Պօզապալեանները օգտակար կը դառնան, որ Ուստան յարմար տուն գտնէ ու տեղաւորուի: Դամասկոս այդ օրերուն ձեմալ փաշայի նստատեղին էր եւ Ուստա Մելքոնի դամասկոսեան շրջանի գործերէն կը չիշուի իրենց հովանաւոր փաշային նուիրուած «...ափսէ մը վեց աքաղաղաձեւ բաժակներով, որոնք պիտի լցուէին ափսէին կեղրոնը դրուած աղանակերպ սրուակի ընդունարանէն, կտուցէն հոսեցնելով խմիչքը, կափարիչին վրայէն մատի սեղմումով մը»: Կը չիշուի նաեւ դարձեալ ձեմալի համար պատրաստուած առիւծի ութը գլուխներու մասին, որոնք հաւանաբար նկատի առնուած են աւագանի մը վրայ տեղադրելու համար: Անոնց բաց երախներէն շատրուանին ջուրը պիտի ցայտէր դէպի կեղրոն: Նոյն շրջանի գործերէն է նաեւ զագաթին թռչնակով կրակարան մը, որ վարպետը նուիրած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին «1915-ի արտորի ժամանակ Մելքոնը իր տան առարկաները ամբողջութեամբ վստահել է իր թուրք դրացիին: Երբ 1918-ին Յարութիւնն ու Աւետիար

վերադառնում են Այնթապ, պարկեշտ հարեւանը մինչեւ վերջին առարկան վերդարձնում է տէրերին»: Տակաւին թուրք պղնձագործ մը, երբ Հալէպի մէջ կը ծանօթանայ Յովհաննէսին, եւ կ'իմանայ անոր Մելքոնին թուրք ըլլալը, կ'ըսէ. «Աստուած թող լոյսերու մէջ պահէ Մելքոնի հոգին: Ես Մելքոնի որեւէ գործ կը բարձրացնեմ, կը դնեմ երեսիս ու կը համբուրեմ»:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆ 1886 - 1967

«Կապարի շերտի վրայ ամբարցնելով արծաթեայ թիթեղի համապատասխան կտորը, Մելքոնը կանացի թասակներ է դրուագել, իսկ աւագ որդին՝ Յարութիւնը, գօտիների համար է դրուագազարդ մասեր պատրաստել»: Լուսանկարը մեզ կը ծանօթացնէ նաեւ Յարութիւնի պատանի տարիքին պատրաստած գեղեցիկ սրճեփին: Աշխատանքի ընթացքին Յարութիւն կը սիրէր երգել. յաճախ կը լսուէր «Հայ ազգի փրկիչ» Նրիմեան Հայրիկի երգը, լեռներու բարձունքին գոհուած ֆիդայու երգը: Կ'երգէր նաեւ օսմանեան երգ մը (Մօր գառնուկներ ենք, հայրենիքի գաւակներ ենք, մահուընէ չենք վախնար): Յարութիւն պատրաստած էր Երուսաղեմի Պատրիարք Տ. Եղիշէ Արք. Դուրեանի դիմաքանդակը, բուրվառ, կանթեղներ եւ կաղապար՝ արծաթէ ձուլակտոր ստանալու համար: Անոր պատրաստած գործերը մեծ բաւարարութիւն կը պատճառէին գնորդներուն:

Գիրքի էջերուն կը տեսնենք ինքնաեւ մը, Հալէպի խանութին մէջ պատրաստած 1957-ին, որ այժմ Տէմիրճեան ընտանիքին սեփականութիւնն է: Նշանաւոր պղնձագործն ու արծաթագործը ունեցած է չորս գաւակ՝ Անահիտ, Արաքսի, Մելքոն, Յովհաննէս:

ԱԻԵՏԻՍ ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆ 1888 - 1961

Աւետիսի մասին շատ խօսուած է եւ մինչեւ այսօր ալ կը

Շար.ը էջ 19



MARTIAL ARTS - ORGANIZED by

GAIDZ YOUTH ORGANIZATION



SEVAK HAKOBYAN

4th dan

INTERNATIONAL MASTER OF MARTIAL ARTS

WORLD RECOGNIZED MEMBER OF ADAPTIVE SPORTS

- ❖ MARTIAL ARTS
- ❖ SELF-DEFENSE
- ❖ FOR MEN, WOMEN, CHILDREN & PEOPLE WITH DISABILITIES OF ALL AGES
- WORLD RECOGNIZED INSTRUCTOR**
- ❖ FREE for PEOPLE With DISABILITIES - GREAT RATES for FAMILIES & STUDENTS

ADDRESS: 1060 NORTH ALLEN AVENUE, PASADENA, CA 91104

For registration and info text: 626-926-7224 or email: info@gaisz.net




FOLLOW US ON:

 @Gaidzyo;
  Gaidz Youth Organization;
  @GaidzYouth

ՔԱՐՎԱՃԱՌԸ՝ ԼԵՅ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ԱԶՔԵՐՈՎ

ԹԱՍԱՐԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ազգութեամբ լեհ ազգագրագետ Կոնրադ Սեկերսկին Հայաստանի մասին առաջին անգամ լսել է ներկայիս Թուրքիայի տարածք կատարած այցելութեան ժամանակ: «Ուսանող տարիներին կուրսընկերներին հետ եղանք այն վայրերում, որ այստեղ Արեւմտեան Հայաստան են կոչւում: Դրանից առաջ Հայաստանի, հայկական մշակույթի մասին որեւէ բան չէի լսել: Տեսնելով հայկական ճարտարապետական յայտնի յուշարձանները՝ որոշեցի յետագայում այցելել Հայաստան ու աւելի շատ բան իմանալ Հայաստանի մասին», պատմում է Կոնրադը: Առաջին այցելութիւնից յետոյ Հայաստանը նրան աւելի ու աւելի է հետաքրքրում, եւ ազգագրագետն այստեղ երկարատեւ ծրագրեր ու ուսումնասիրութիւններ է իրականացնում: Ուսումնասիրութեան հիմնական թեման հայկական եկեղեցին է, քրիստոնէական սովորույթները, ուխտագնացութիւնները: Ուսումնասիրութիւններ կատարելու նպատակով եղել է Հայաստանի գրեթէ բոլոր անկիւններում, հասել է նաեւ Արցախ:



վաճառում մէկ ամսից աւելի ուսումնասիրութիւններ է արել Հարաւային Գալիֆորնիայի համալսարանի հայագիտութեան ինստիտուտի յայտարարած նախագծի շրջանակներում: «Իմ նախագիծը



Այս տարուայ Նոյեմբեր ամսին Կոնրադ Սեկերսկին Քարվաճառում էր՝ հետազոտութիւն կատարելու նպատակով:

«Այս այցելութիւնից առաջ մի քանի անգամ եղել էի Ղարաբաղում, սակայն այդ ուղեւորութիւններս գիտական չեն եղել, հետազոտութիւններ չեմ անցկացրել: Դրանք միայն ճանաչողական այցեր էին, եղել էի Շուշիում, Ստեփանակերտում, Գանձասարում», պատմում է մեր գրուցակիցը: Խօսելով Քարվաճառ այցելելու որոշման մասին, նշում է, որ մօտ 8 տարի առաջ Արցախ կատարած ուղեւորութեան ժամանակ մի քանի ժամով ուղղակի անցել է Շահումեանի շրջանով: «Քարվաճառ քաղաք այդ ժամանակ չմտայ: Բայց մի քանի խօսակցութիւնները, որ ունեցայ տեղացիների հետ, ինձ շատ հետաքրքրեցին: Հասկացայ, որ այս տարածքն ուսումնասիրութեան համար շատ լաւ թեմա կը լինի: Անցաւ 8 տարի, եւ ես այս տարի վերջապէս հնարաւորութիւն ունեցայ աւելի երկար ժամանակով գալ այստեղ»: Ազգագրագետը Քար-

վերաբերում է Շահումեանի եւ Քաշաթաղի շրջանների ժամանակակից բնակեցմանը: Այս շրջաններում ես հնարաւորութիւն ունեցայ անցկացնել 6 շաբաթ, ինչպէս նաեւ՝ մի քանի օրով եղայ Ստեփանակերտում»: Խօսելով ստացած տպաւորութիւնների մասին՝ մեր գրուցակիցն ընդգծեց, որ որեւէ յստակ եզրակացութիւն այժմ անել չի կարող, քանի որ ուսումնասիրութիւնները, տեղում ունեցած գրոցները պէտք է համակարգի ու վերլուծի:

«Այս պահին միայն կարող եմ ասել, որ այս ուսումնասիրութեան գաղափարն իրեն արդարացրեց, չնայած հիմա դժուար է եզրակացութիւններ ու ամփոփումներ անել: Իհարկէ, սա կարճ ժամկէտ է՝ նոր սոցիումի մէջ խորանալու համար: Սակայն ինձ համար շատ հետաքրքիր էր շփուել այն մարդկանց հետ, ովքեր որոշել են տեղափոխուել

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատարակչական բաժինը լոյս է ընծայել երկու նոր հրատարակութիւններ՝ Երուսաղ Օտեանի «Անիծեալ տարիներ. 1914-1919 (անձնական յիշատակներ)» մենագրութեան ուսերէն թարգմանութիւնը եւ Արշակ Տէր-Միքէլեանի «Ուսումն Ս. Գրոց (ներածութիւն)» դասագիրքը:

Երուսաղ Օտեանի մենագրութիւնը, որտեղ ներկայացւում են հայ ժողովրդի պատմութեան ամէնից մուսլ էջերը՝ Օսմանեան կայսրութեան կողմից իրականացուած Հայոց Յեղասպանութիւնը եւ հայկական Գողգոթան, ուսերէնի է թարգմանել Հրագ-

դան Մաղոյեանը: Հոգեւոր-կրթական հաստատութիւնների ուսանողների եւ Ս. Գրքով հետաքրքրողների համար նախատեսուած «Ուսումն Ս. Գրոց» դասագիրքը, որի առաջին հրատարակութիւնը Արշակ Տէր-Միքէլեանը ձօնել էր Գէորգեան հոգեւոր ճեմարանի հիմնադրման 25-ամեակին (Թիֆլիս, 1901 թ.), վերահրատարակուել է գրեթէ առանց փոփոխութեան՝ լրացուելով միայն 20-րդ դարասկզբին բնորոշ եզրերի վերաբերեալ ծանօթագրութիւններով: Գրքերը հրատարակուել են մեկեկնասութեամբ «Մարգիս Գաբրիէլեան» հիմնադրամի:

այստեղ ապրելու, ինձ հետաքրքիր էր նրանց հարցնել ու հասկանալ, թէ ինչու են նրանք այդ քայլին գնացել, ինչպէս են յղթահարել այն դժուարութիւնները, որոնք եղել են յատկապէս վերաբնակեցման առաջին տարիներին: Այս մարդիկ եկել են տարբեր բնակավայրերից, եւ հետաքրքիր էր իմանալ, թէ ինչպէս են նրանք այստեղ ստեղծում իրենց միկրոհասարակութիւնը»:

Ազգագրագետի խօսքով՝ ինքն այստեղ փորձում էր շրջանի պատմութեանը նայել ոչ թէ ընդունուած քաղաքագիտական տեսանկիւնից, այլ՝ առանձին մարդկանց պատմութիւնների միջոցով: «Ինձ համար հետաքրքիր էր համարել պետական սոցիալական ծրագրերն ու անհատների պատմութիւնները: Հետաքրքիր էր իմանալ այն

օժանդակութեան մասին, որ տրամադրուած է մարդկանց՝ այստեղ առօրեայ հոգսերը լուծելու համար: Քաղաքագետները կարող են հարցին նայել ընդհանուր դիտանկիւնից, իսկ փորձել եմ գտնել այն մարդկանց դիտանկիւնը, ովքեր այստեղ ամէն օր կենցաղային խնդիրներ են լուծում», նշեց մեր գրուցակիցը՝ ընդգծելով, որ ուսումնասիրութեան արդյունքներն ամփոփուելուց յետոյ հրապարակուելու են:

«Շատ կը ցանկանայի նորից այստեղ վերադառնալ, այստեղ շատ հետաքրքիր մարդիկ կան, ում հետ կարելի է գրուցել, ինչպէս նաեւ՝ շրջանը շատ գրաւիչ է իր բնութեամբ, հանգստանալու հիանալի հնարաւորութիւն է տալիս», ամփոփեց Կոնրադ Սեկերսկին:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՅ
 ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻՒ ՀԱՄԱՐ)
 ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
 ՄԱՆՐԱՍՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
 ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

MEHER BABIAN, D.D.S.
 General Dentistry
 1111 S. Glendale Avenue
 Suite 206
 Glendale, CA 91205
 Tel: (818) 547-0884
 Tel: (818) 547-1476

SEROP'S CAFE
 GREEK & LEBANESE FOOD
 SERVING BATON ROUGE SINCE 1979

ԻՆՉՊԵՄ ՍԻՐԵԼ ՏՂԱՄԱՐԴԻԿ

1. Անընդհատ լիչեցէք, թէ որն է տղամարդու հետ ձեր յարաբերութիւններուն հետադարձ կապը: Բնական մարդոց յարաբերութիւններուն նպատակը երկար ժամանակով առաւելագոյն յարմարաւէտութիւն ապահովելն է, այսինքն՝ երջանիկ դարձնել դուռն քեզ եւ զուգընկերդ: Ասիկա պէտք է կրկնէք ամէն օր, երբ ցանկութիւն ունիք ձեր զուգընկերոջ սորվեցնել, ուղղել, քննադատել, հարձուփորձ ընել անոր ժամանցի մասին, կարծիք յայտնել անոր ընկերներուն մասին, վիճիլ քաղաքականութեան, կրօնի, անոր տաբատի գոյներուն շուրջ:

Ձեր արդար ըլլալը եւ հետաքրքրասիրութիւնը տուեալ պարագային կ'արժե՞ն այն հանգիստն ու ուրախութիւնը, որոնցմէ կը զրկէք ձեր զուգընկերը: Վէճերու մօտաւորապէս երկու երրորդին պատճառը կը բնութագրուի հետեւեալ կերպով՝ «կիրք անտեղի խնդիր ստեղծած է եւ ամուսինի արձագանգին բացակայութենէն բորբոքած ու դարձուցած է ողբերգութիւն»:

2. Գովաբանեցէք զինք: Եթէ ան արժանի չէ գովասանքի եւ ամէն ինչ սխալ կ'ընէ, դուք ընդհանրապէս ի՞նչ գործ ունիք այդ անյաջողակին հետ: Հեռացէք, մի երկարաձգէք մէկզմէկու հոգեվարքը, կարգացէք 1-ին կէտը: Մի ըլլաք անոր համար կռուարար մայրիկ, խիստ դեկավար, քմահաճ դուստր. բոլոր այս դերերէն վերցուցէք միայն դրական բաղադրիչներ՝ մշտական, բայց ոչ կապուած հոգատարութիւն, հետաքրքրուածութիւն անոր աճին մասին, հիացմունք անոր ամբողջութեամբ: Շատերը մանկութեան տարիներուն լսած են «շատ գովեցին՝ փճացաւ», ասիկա սխալ է, չափահաս, գիտակից մարդը շատ գովել հնարաւոր չէ, ան ինքնագնահատականի նշանոց ունի: Եւ գովաբանել կը նշանակէ ոչ թէ քծնիլ, այլ մարդուն նայիլ լաւը տեսնելու ցանկութեամբ: Գովասանքը հաճելի է բոլորին, եթէ դուք չէք ոգեւորեր զինք, բնականաբար կը գտնուին աւելի խելացի մարդիկ, որոնց հետ ան կը սկսի շփուիլ:

3. Մի նուաստացնէք զինք եւ մարդոց ներկայութեամբ խնդիր-

ներ մի ստեղծէք: Յարաբերութիւններու պարզաբանումը հասարակական վայրերու մէջ բանադրանք է, քանի որ տղամարդու համար պատկառելի եւ յուսալի հասարակական կերպարը շատ աւելի կարեւոր է, քան կնոջ համար, որ կրնայ ինքն իրեն արտօնել ըլլալ սեթեթեթ եւ թեթեամբ: Երբ «կէսը», ամենապատահելի անձը, ընկերներու, գործընկերներու կամ դուրսի ամբողջին ներկայութեամբ կը վնասէ տղամարդուն հեղինակութիւնը, ատիկա կ'ընկալուի իբրեւ հարուած թիկունքէն: Նման բաները կրնան ներուիլ, բայց երբեք չեն մոռցուիր: Տղամարդը սեւերես ընել. ասիկա կնոջ ամենամեծ ռազմավարական վրիպումներէն մէկն է: Մի կասկածիք՝ ձեզի հետ ալ նման բան կրնայ պատահիլ: Այնպէս որ, դժգոհութիւնները գապեցէք մինչեւ տուն հասնիլը, ճանապարհին ալ հաւանաբար սթափիք ու վերանայիք խնդիրը:

4. Անոր դիմելով մի օգտագործէք նուազեցնող-փաղաքշական բառեր: Նոյնն է, եթէ ան սխալ ձեզ «մայրիկ», «բոլորիկ» կոչել: Ընդմիջ մոռցէք նուազեցնող վերջածանցներու մասին:

5. Աջակցեցէք անոր ձեռնարկներուն, եթէ անգամ անոնք անհեթեթ են: Եթէ ան կը վաճառէ ձեր ամուսնական մատանին, որպէսզի վատնէ խաղերու վրայ, ասիկա արդէն այլ հարց է: Երբ ան հետաքրքրուած է սառուցի տակ կատարուող որսով, թզուկներու հաւաքածոյ ստեղծելով, համացանցով սեփական ստեղծագործութիւնը վաճառելով՝ այլ հարց: Ռեւէ մարդու բնութեան մէջ դրուած է նոր նախաձեռնութիւնները սուրիններով դիմաւորելու ցանկութիւնը, քանի որ որեւէ համակարգ հակուած է հաւասարակշիւտեան, բայց այստեղ դուք պէտք է բնութեանէն աւելի խելօք ըլլաք: Դուք կ'ափսոսա՞ք քանի մը հազարը սիրելի մարդու՝ ձուկ որսալու երջանկութեան համար եւ յետոյ կը զարմանաք, թէ ինչ սաստիկութեամբ ան կ'ատէ ձեր թափառումները կոչիկի խանութներու մէջ: Երբ չէք գնահատեր եւ չէք աջակցիր, լիչեցէք, որ ատիկա կրնայ ընել ուրիշը, իսկ դուք պարզապէս կ'օտարանաք:

հի եւ մարդոց հուծեան նկատմամբ հետաքրքրասիր չէ, շատ յաճախ կը փակուի եւ կ'ըսէ, «ոչ, ամէն ինչ այսպէս կ'ըլլայ, եւ ոչ մէկ ուրիշ կերպ»: Երկարատեւ յարաբերութիւններու համար աւելի լաւ է ընտրել մէկը, որ կրնայ բաց ըլլալ: -Ընտրեցէք մէկը, որ կ'ուզէ ըլլալ այնպիսին, ինչպիսին դուք էք՝ միաժամանակ ուժեղ եւ զգալուն (քնքուշ): Որակները, որոնք երբեմն բնորոշ են կիրներու, ուժն ու փիրունութիւնն են: Ուժ, որ բնորոշ է դիմացկուն ծառին: Քամին կրնայ հարուածել զինք, սակայն իր ճկունութեան հաշտուցն ան կրնայ շարժիլ քամիրն հետ: Զգայունութիւն ըսելով՝ նկատի ունինք ողջ ըլլալու եւ շրջապատին մէջ կատարուած ընկալելու կարողութիւն: Որոշ մարդոց պէտք է ասոր մէջ քիչ մը օգնել: Կարելի է հսկայական ուժ ունենալ բարի, սիրող եւ հաւատարիմ ըլլալու համար, բայց եթէ չսորվիս եւ չզարգացնես այդ ներուժը՝ ոչին-

7 ՆԱԽԱՆՇԱՆ, ՈՐ ՁԵՐ ԱՄՈՒՍԻՆԸ ԵՐՁԱՆԻԿ Է

1. Համբոյր- Ան ձեզ համբոյրով կը դիմաւորէ, երբ աչ խառնաքէն տուն կը վերադառնաք: Ի դէպ՝ կը համբուրէ ո՛չ թէ այսերը, այլ՝ շուրթերը: Հաւատացէք, որ ատիկա աւելի լաւ է, քան զրկախառնութիւնը:

2. Շփում- Երբ ան գործերով տեղ կ'երթայ, օրուան ընթացքին առնուազն մէկ անգամ կը հեռաձայնէ ձեզի, եւ միշտ կը պատմէ, թէ ինչպէս են իր գործերը: Կ'ըսէ, թէ կը կարօտնայ ձեզ: Գործուղման մէջ գտնուող ամուսինը կ'ամ կը կարօտնայ իր տիրկնոջ, կ'ամ, հակառակը, ուրախ է, որ «հեռու է»: Եթէ ձեր ամուսինը կ'ուզէ ձեր հետ ըլլալ, ուստի աւելի յաճախ պիտի հեռաձայնէ, քան կը կարծէք: Եւ, այո, երջանիկ ամուսինը 100%-ով կը վստահի ձեզ: Այնպէս որ՝ անոր կողմէ որեւէ կասկած չի կրնար ըլլալ:

3. «Կը սիրեմ քեզ»- Ան կ'ըսէ, որ կը սիրէ ձեզ: Ամէն օր: Օրական քանի մը անգամ: Իսկ դուք կը պատասխանէք: Իսկական սէրը չի ծերանար: Երջանիկ ընտանիքի մէջ ամուսինները ամէն օր իրարու կը յայտնեն իրենց սիրոյ մասին: 4. Օգնութեան ձեռքեր- Ան կ'օգնէ ձեր տան գործերուն: Կ'ուզէ թեթեւցնել ձեր բեռը: Կ'ուզէ իր ներդրումը ունենալ: Ան պատրաստ է ձեր գործընկերը դառնալ ամէն պարագայի, պատրաստ է միասին կարգի բերել բնակարանը: Պատրաստ է ձեզի հետ միասին ստուգել երեխաներուն դասերը: Որովհետեւ կը սիրէ ձեզ:

5. Հաճոյախօսութիւն- Ան գովեստի խօսքեր կ'ըսէ ձեզի: Ուշադրութիւն կը դարձնէ այն ամէնուն,

5 ԲԱՆ, ՈՐՈՆՔ ՆԿԱՏԵԼԻ ԿԵՐՊՈՎ ԿԸ ԾԵՐԱՑՆԵՆ ԿԻՆԸ

1. Սպիտակ մագերը: Եթէ դուռն սկսած ես ձերմակ մագեր նկատել, ատիկա դեռ խուճապի մատնուելու եւ երիտասարդութեան հրաժեշտ տալու առիթ չէ: Վաղ ձերմակահերութիւնը կը վկայէ ճնշախտի, քունի պակասի կամ մարմնի մէջ calcium-ի պակասի մասին: Սակայն, ատիկա կրնայ նաեւ ժառանգական ըլլալ: Մի՛ տիրիք, ուղղակի ժամանակն է դիմելու լաւ վարսալարդարի: Ընդհա կառակը, ձերմակ մագերը հիանալի առիթ են մագերու գոյնին հետ փորձեր կատարելու համար: Գլխաւորը պարզ կանոնը լիչեցն է. փորձէ՛ վերստեղծել բնական գոյնը կամ քիչ մը բաց երանգը: Որքան մագերուն գոյնը մոլգ ըլլայ՝ այնքան աւելի տարիքոտ կ'երեւիս:

2. Թռչնած վիզ: Վիզի խնամքը պէտք է դէմքի խնամքին հաւասար մեր ամէնօրեայ սովորութիւնը դառնայ: Ատիկա յատկապէս կը վերաբերի 30-ամեակը բոլորած կիրներու: Վիզին մորթը նուրբ է եւ բարակ, անիկա կարիք ունի լրացուցիչ խնամքի: Անիկա աւելի շատ հակուած է վաղաժամ ծերացման, ուստի զայն պէտք է լաւ խոնալցնել: Վզնոցները պէտք է հաւատարիմ ընկերուհիները դառնան: Մի՛ մոռնաք անոնց մասին

չի կը հասնիս: -Ընտրեցէք մէկը, որ կ'ապացուցէ, որ իրեն համար ցաւոտ է, երբ դուք իրեն ցաւ կը պատճառէք: Եւ ընդհակառակը: Ընտրեցէք մէկը, որ, ձեզի ցաւ պատճառելով, նոյնպէս կը տեսնէ ձեր ցաւը եւ կը ցաւի ատոր համար: Զափազանց

որ կ'ընէք, նաեւ անոր, թէ ինչ տեսք ունիք: Դուք կրնաք օրուան ընթացքին քանի մը անգամ նկատել, որ ան կը դիտէ ձեզ: Կը թուի՝ անոր երբեք չի ձանձրացնէ ձեզի հետեւիլը: Ան կը տեսնէ ձեր բոլոր թերութիւնները, բայց նաեւ կուրցած է սիրով:

6. Միթաթարութիւն- Ան ձեր ուսերը կը բռնէ ամէն անգամ, երբ կ'արտասուիք: Երբ ձեր հոգեկան ցաւը ուժեղ է, ան միշտ ձեր կողքին է: Հիասթափութեան արցունքներ: Ան կրկին ձեր կողքին է: Բոլորս ալ գիտենք, որ կեանքը կատարեալ չէ: Եւ ամուսիններուն կարեւորագոյն խնդիրներէն է՝ դժուար ժամանակներուն իրարու սատարելը: Բայց ատիկա կը յաղթահարեն միայն երջանիկ գոյգերը:

7. Անկեղծութիւն- Ան ձերու հետ կը կիսէ ե՛ւ իր երազանքները, ե՛ւ մտահոգութիւնները: Անոր համար ատիկա նոյն քան բնական է, որքան ձեզի համար: Ան պէտք է գիտնայ, որ կրնայ ձեր մօտ բարոյական աջակցութիւն գտնել, եթէ յանկարծ իր աշխարհը սկսի կործանիլ: Եթէ ան, հակառակը, ոչինչ կը պատմէ ձեզի, կը նշանակէ՝ ձեր միջեւ որեւէ սխալ բան կայ: Երջանիկ ամուսնացած տղամարդը երբեք չի վախնար «լալկան» կամ «միամիտ տղայ» թուալ իր կնոջ աչքին: Ան գիտէ, որ սիրելի կինը պիտի հասկնայ զինք: Յիշեցէք. երբեք ուշ չէ սկսիլ երջանիկ յարաբերութիւններ կառուցել: Պարզապէս ընտանիքը ձեզի համար առաջնահերթութիւն դարձուցէք, եւ ամէն ինչ կը դառնայ բնականոն:

տարուան ցուրտ եղանակներուն:

3. Անխնամ ձեռքեր: Ձեռքերը նոյնպէս կը մատնեն կնոջ տարիքը: Այս պարագային կարեւոր չէ, թէ որքան երիտասարդ տեսք ունի ձեր դէմքը: Եթէ ձեռքերը անխնամ են, համարէ՛, որ երիտասարդ երեւնալու բոլոր ջանքերդ իրոք են: Անպայման խոնալցուր ձեռքերու մորթը, իւղերով լոգանք կազմակերպէ անոնց համար եւ հետեւի՛ր եղունգներու վիճակին: Յիշէ՛, որ խնամուած ձեռքերը եւ կողկի մանիքիւրը իւրաքանչիւր կնոջ այցեքարտն է:

4. Վառ շպար: Բարեբախտաբար վանող շպարը այսօր արդէն արդիական չէ, եւ աղջիկներուն մեծ մասը դէմքին վրայ կը սահմանափակէ զայն: Բնական տեսքը այն է, որ երբեք չի ծերացնէ:

5. Արեւակիզում: Մորթի պրոնգագոյն երանգը քանի մը տարիով կ'աւելցնէ ձեր տարիքը, իսկ չափազանց շատ արեւակիզում կը ջրագրկէ մորթը՝ նպաստելով արագ ծերացման, կնճիռներու յառաջացման եւ առաձգականութեան կորուստին: Եթէ դուռն չես կրնար հրաժարիլ արեւային լուսանքէն, ուստի մտածէ՛ արեւապաշտպան քսուքի որակին մասին: Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն

կարեւոր է իր ցաւը ցոյց տալու եւ ուրիշինը զգալու ունակութիւնը: Յարաբերութիւններուն բնոյթը այնպէս է, որ չես խուսափիր լարուածութենէն մէկը միւսին վիրաւորելէն: Պարզապէս պէտք է անընդհատ նոյն ցաւու տեղը հարուածել:

ԵՐԿԱՐԱՏԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԳԱՂՏՆԻՔԸ

-Մարդը ընտրեցէք այնպէս, կարծես թէ կոյր էք: Փակեցէք ձեր աչքերը եւ զգացէք, թէ ինչ կը մտածէք այդ մարդուն մասին: Անոր բարութեան, հաւատարմութեան, նրբազգացութեան, նուիրուածութեան, ձեր եւ իր սեփական անձին մասին հոգալու անոր ունակութիւններուն: Թէեւ մեր մշակուցի թի առանձնապատկութիւնները կ'ազդեն շատ բաներու վրայ, ներառեալ՝ կը ստիպեն կարծել, որ աչքով տեսածը շատ կարեւոր է:

-Գոյութիւն ունի 1 զլխաւոր տարբերութիւն այն մարդոց միջեւ, որոնք կրնան երկարատեւ յարաբերութիւններ կառուցել, եւ անոնց, որոնք կրնան միայն կարճատեւ յարաբերութիւններու զուգընկեր ըլլալ:

Եւ այդ տարբերութիւնը սորվելու ունակութիւնն է: Ան, որ ի վիճակի չէ իրերու նորովի ընկալման միջոցներ իւրացնել, ան որ չի կրնար սովորական բաները նոր լոյսի տակ տեսնել, ան որ աշխար-

ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

ԽՈՅ **Մարտ 20-Ապրիլ 19**
Այս շաբաթ անուշադրութեանդ հետեւանքով փոքր արկածի մը զոհ պիտի դառնաս: Անկեղծութեամբ եւ խոհեմութեամբ ծանր գործերդ փորձէ յառաջ տանիլ: Ցաւերդ խորը չեն, երբէք մի յուսահատիր: Ուրախութիւնդ պիտի վերագտնես:
Բախտաւոր թիւերդ են: 1,11,19,22,31

ՑՈՒԼ **Ապրիլ 20-Մայիս 20**
Այս շաբաթ պիտի թուի թէ անձ մը վտանգ կը սպառնայ քեզի, հաւատարմութիւնդ մի խախտեր եւ դիրքդ մի փոխեր ուրիշ մէկու հանդէպ: Դուռն ակտիւ ունիս քեզի նեցուկ եւ թիկունք կանգնող անձի մը որ իրագործես երազներդ:
Բախտաւոր թիւերդ են: 2,11,21,30,35

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ **Մայիս 21-Յունիս 20**
Այս շաբաթ նեղութիւն մի պիտի տխրացնէ քեզ եւ տիրապետ կեանքիդ, ի զուր մի պայքարիր վստահելի անձի մը դիմէ: Դասախօսութեան մը ներկայ պիտի գտնուիս եւ պիտի մասնակցիս շարժումի մը: Հաւաքական ոյժի հաւատայ եւ վճռական եղիր առած որոշումներուդ վրայ:
Բախտաւոր թիւերդ են: 10,19,25,34,38

ԽԵՑԳԵՏԻՆ **Յունիս 21-Յուլիս 22**
Այս շաբաթ ընտանեկան պարագաներդ մէկը պիտի նեղացնէ քեզ: Թշնամիի դիրք մի առներ: Ձուսպ եղիր արտայայտութիւններուդ մէջ, նամանականդ գործի մէջ, եւ գաղտնիքներդ ուրիշիմ մի ըսեր: Որոշումներուդ մէջ ամուր մնացիր:
Բախտաւոր թիւերդ են: 5,19,20,28,30

ԱՌԻԾ **Յուլիս 23-Օգոստոս 22**
Այս շաբաթ ուրախ եղիր եւ բարիքներ ըր: Փաստերու վրայ հիմնուած իրողութիւններու համար մի վիճիր, լաւ է որ տեղի տաս եւ միայն ունկնդիր ըլլաս: Գեղեցկութեանդ վրայ մի վարամիր սակայն զայն մի օգտագործեր: Հին դասընկերոջ մը հետ պիտի վերամիանաս եւ հին յիշատակներու մասին խօսիս:
Բախտաւոր թիւերդ են: 6,8,19,27,37

ԿՈՅՍ **Օգոստոս 23-Սեպտեմբեր 22**
Այս շաբաթ տարեցի մը յոգածութեամբ պիտի զբաղիս եւ պիտի խնամես զայն: Գործատեղիիդ ընդհանուր անձնակազմի հետ համոզուիս մը պիտի ունենաս, որու ընթացքին շատ յաջող որոշումներու պիտի հանգիք: Անձնակազմ կարողութիւններդ օգտագործէ անոնց իրականացման համար:
Բախտաւոր թիւերդ են: 2,6,14,23,38

ԿՇԻՈՔ **Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22**
Այս շաբաթ կարծիքներու փոխանակումի մը ընթացքին, կրնաս վիճիլ մեծաւորիդ հետ: Համակարգիչդ երկար ժամեր օգտագործելով, առողջունիւնդ կը վնասես: Հանրային վայրերէ հեռու մնացիր: Տանդ մէջ նորոգութիւն մը, որ երկար ժամանակէ ի վեր ձգձգած էիր, պէտք է իրականացնես:
Բախտաւոր թիւերդ են: 10,14,20,22,25

ԿԱՐԻՃ **Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21**
Այս շաբաթ չակնկալուած օգնութիւն մը ճիշդ իր գործին պիտի ծառայէ, քեզ փրկելով մեծ վտանգէ մը: Ֆիզիքական կամ հոգեկան պէտքերուդ համար դիմէ ամենամտերիմ բարեկամիդ եւ վստահէ անոր: Երախտագիտութիւնդ յայտնելու մի մոռնար:
Բախտաւոր թիւերդ են: 6,9,15,18,24

ԱՂԵՂՆԱԻՈՐ **Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 20**
Այս շաբաթ գործիդ դժուարութիւնները մարտահրաւերի դուռ մը պիտի բանան գործընկերներուդ միջեւ: Խոչընդոտներու չհանդիպելու նպատակով քու ուղղութիւնդ մի շեղեր: Տնտեսական տագնապէ մը յաջող դուրս պիտի գաս: Ուշադիր եղիր:
Բախտաւոր թիւերդ են: 21,26,30,34,38

ԱՅԾԵՂՁԻՐ **Դեկտեմբեր 21-Յունուար 19**
Այս շաբաթ կէս թողած ծրագիր մը նուիրումով եւ մեծ հաճոյքով պիտի ամբողջացնես եւ ներկայացնես: Բարեկամներուդ միջեւ բաղդատութիւն մը կարելի չէ որ դնես: Ժպտով եւ լաւատեսութեամբ դիմագրակ դժուարութիւններդ:
Բախտաւոր թիւերդ են: 4,7,14,22,34

ԾՈՎԱՆՈՅ **Յունուար 20-Փետրուար 18**
Այս շաբաթ պիտի ստիպուիս երկու բարեկամներու միջեւ ընտրութիւն կատարել որպէսզի հարց մը խաղաղութեամբ լուծես: Վստահ եմ ճիշդ ընտրութիւնը պիտի կատարես: Թռիչք մը դէպի հեռու վայր, երջանկութիւն պիտի պատճառէ քեզի:
Բախտաւոր թիւերդ են: 1,9,19,22,33

ՉՈՒԿ **Փետրուար 19-Մարտ 20**
Այս շաբաթ բարեկամութիւնդ վերհաստատէ քեզմէ նեղուած անձի մը հետ եւ սիրտդ բաժնեկցիր անոր հետ: Մարգական մրցոյթի մը պիտի մասնակցիս: Գործդ մեծ յաջողութիւն պիտի գտնէ այս շաբաթ: Պատճառ մի ըլլար ուրիշ անձի մը թշուառութեան, զգուշութեամբ վարուէ բոլորիմ հետ:
Բախտաւոր թիւերդ են: 1,2,14,28,35

Հայ-Ամերիկեան Թանգարանի Ծրագիրը

Շարունակուած էջ 13-էն

կուսակցի կեդրոնի առաքելութիւնն ու առաջադրանքները, միաժամանակ շնորհակալութիւն յայտնեց ընդունելութեան կազմակերպիչ յանձնախումբին:

Այնուհետեւ ցուցադրուեցաւ կարճամեթրաժ գունաւոր եւ եռա-ծաւալ (3D) կենդանացեալ տեսա-երիզ մը, որով ներկաները մօտէն զաղափար մը կազմեցին արուեստականօրէն վերակազմուած ապագայ թանգարանի հոյակապ կառոյցին մասին:

Ելոյթ ունենալով Կլենտէյլի քաղաքապետուհի Տիկ. Փօլա Տիվայն իր գոհունակութիւնը յայտնեց սոյն նախաձեռնութեան մասին, որ կոչուած է նաեւ դառնալու մշակութային կեդրոն մը:

Ներկաներուն մէկ առ մէկ ծանօթացուեցան Հայ-Ամերիկեան թանգարանի հոգաբարձուներու Խորհուրդի անդամները, որոնք կը ներկայացնեն Հարաւային Գալիֆորնիոյ Հայկական 10 ղրխաւոր կազմակերպութիւնները (կրօնական, քաղաքական եւ բարեսիրական ու մշակութային): Յատուկ յիշատակութեան արժանացան Սէնատի անդամ Տը Լէոնն ու Խորհրդարանական Էտուին Նազարեանը:

Հայ Ամերիկեան թանգարանի եւ Մշակութային կեդրոնի շինութեան գործադիր մարմնի ատենապետ Պերճ Կարապետեան խօսք առնելով կարեւորութեամբ նշեց այս նոր կառոյցի բերելիք օգտաշատ նպաստի մասին: Արդարեւ շրջանի բնակչութեան համար

կրթամշակութային կարեւոր հաստատութիւն մըն է, որ իր բարենպաստ ներդրումը պիտի ունենայ նոր սերունդի զաւակներուն առաւել եւս զարգացնելու իրենց գիտելիքները այս երկրի բազմազգ ժողովրդներու անցեալի ժառանգութեան շուրջ:

Խօսելով վերոյիշեալ թանգարանի մասին Պերճ Կարապետեան հակիրճ տեղեկութիւններ տուաւ ծրագրաւորումի, արտօնագրի եւ յարակից այլ նախապատրաստական հանգրուանային աշխատանքներու գործընթացի մասին: Արդարեւ, ներկայիս թանգարանի կառուցման աշխատանքներու գործն ստանձնած է «Ալաճաճեան-Մարգոսի» հիմնարկութեան փորձառու ճարտարապետներու խումբը:

Նշենք նաեւ որ Հայ-Ամերիկեան թանգարանի եւ Մշակութային կեդրոնի շինութեան աշակցելու համար Գալիֆորնիոյ կառավարչը ընդառաջելով ներկայացուած պաշտօնական դիմումին, առ այժմ 1 միլիոն տոլարով իր մասնակցութիւնը կը բերէ կառուցի ֆոնտին: Ձեռնարկի կազմակերպիչները կը նախատեսեն հայ համայնքի նիւթական աշակցութիւնը, այս բազմածախս եւ ազգօգուտ ծրագրի իրականացման համար:

Կլենտէյլի կեդրոնը, Գոլորասո պողոտայի վրայ կառուցուելիք ապագայ թանգարանի շինութիւնը իր աւարտին կրնայ հասնիլ երկու կամ երեք տարիէն:

Բարի երթ եւ յաջողութիւն ազգօգուտ ծրագրին: **Գ.Մ.**

ՊԱՅԵՆՔ ՈՒ ԳՈՒՐԳՈՒՐԱՆՔ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԸ

Շարունակուած էջ 13-էն

նելու համար, իսկ մենք առանց գումար ներդնելով եւ գոհանալով դպրոցների, շաբաթօրեայ եւ կիրակնօրեայ մի քանի ժամերով ուզում ենք մեր երեխաները մաքուր հայերէն խօսեն, գրեն եւ մեր մշակույթին կապուած մնան, էդ քանի ժամերի համար էլ գումար են գանձում, կան շատ ու շատ ծնողներ, որ ձեռնահաստութիւն չունեն այդ դասընթացներին, ուստի պատահում է այն ինչ ասում ենք՝ խորթ են մնում մեր ինքնութեան հետ:

Սփիւռքը պէտք է լուրջ մտածի, այդ սպեղանի մի քանի ժամերով եւ սակաւ հացերով հայութիւն չի կարելի պահել, կարիք եւ անհրաժեշտ է հիմնադրամ կեանքի կոչել, շաբաթօրեայ եւ կիրակնօրեայ դասընթացները դարձնել ձրի կամ թողնել վճարումը կամաւոր ծնողների կողմից, ապա խտասալիկներ եւ բողոքներ պատրաստել ձրիաբար տրամադրելով բոլոր ծնողներին հեռու եւ մօտիկ առ ի տեղեկութիւն հաղորդակցական միջոցներով յայտարարելով: Եթէ մտահոգ ենք եւ մտածում ենք հայապահպանման մասին պէտք է գումար ծախսել եւ առողջ ու գործնական միջոցներ խորհել, ոչ թէ մտածենք եկամուտ քաղել եւ դրամ շահել:

Տօնի առիթով հոկտեմբերի 19-ին գրքերի ցուցահանդէս էր կազմակերպուած «Զէյթուն» քաղաքամասի Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու շրջափակում հոծ թւով հանդիսականների ներկայութեամբ Առաջնորդ Սրբազանի նախագահութեամբ: Գրքերի ցուցահանդէսի հիմքը դրել է առաջնորդ

Սեպուհ Սրբազանը, տարբեր օրերով կատարուած է քաղաքամասերի եկեղեցիներում դպրոցների աշակերտութեան եւ ուսուցիչների ներկայութեամբ, սա 14-րդ ցուցահանդէսն էր, տեղի ունեցաւ գեղարուեստական ճոխ ծրագրի եւ ելոյթներ, փակման խօսքն ասաց Սրբազանը, ապա մօտեցան սեղանների վրայ շարուած տարբեր բովանդակութեամբ գրքերը դիտելու, այնուհետեւ տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն:

Ներկայ գտնուեցի «Ռաֆֆի» Մ.Մ. համալիրում մշակույթի տօնի առիթով ձեռնարկին, որը տեղի ունեցաւ հոկտեմբերի 21-ի երեկոյեան նախագահութեամբ Առաջնորդ Սրբազանի հոծ թւով հրաւիրեալների եւ ժողովրդի ներկայութեամբ: Գովաբանելի ճոխ հանդէս իմբական երգերով, մեներգերով, արտասանութիւններով եւ ձկունազարդ պարերով ու հայ մշակույթը դրուատող խօսքերով: Փակման արտայայտութեամբ ելոյթ ունեցաւ Առաջնորդ Սրբազանը վերահանելով թարգմանիչների մեծ ու անփոխարինելի դերը հայի ու հայրենիքի կեանքում, ապա եզրակացնելով խօսքը ասաց՝ «Այս տոնակատարութիւնները պէտք է սթափեցնեն մեզ իւրաքանչիւրիս մեր օջախները ջերմացնելու մեր մշակութային անաղարտ ոգիով»: Այնուհետեւ հանդիսականները Սրբազանի ղրխաւորութեամբ առաջնորդուեցին մի առանձին մեծ սրահում կազմակերպուած կերպարուեստի վարպետ եւ համալսարանի նկարչութեան դասախօս ժորժ Հայրապետեանի շուրջ հարիւր նկարների ցուցահանդէսին՝ արժէքաւոր

ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՀՐԱՋԴԱՆ ԹՈՔՄԱՃԵԱՆԻ «ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆՆԵՐԸ»

Շարունակուած էջ 15-էն

խօսուելի, որովհետեւ ան Այնթապի հայոց ինքնապաշտպանութիւնը կազմակերպող հերոսներէն եղած է: Աւետիս միայն զէնքի վարպետ չէր: Վարպետ էր նաեւ իր հօրմէն ժառանգած արհեստ-արուեստին մէջ: Այս իրապէս յիշարժան գործին մէջ հեղինակը՝ Հրազդան Թոքմաճեան, մանրամասնութիւններ պատմելով՝ արժանի մատուցած է բոլոր Գալէմքեարեաններուն: »Այս քաջ երիտասարդին թուրքերն իսկ չէին համարձակուած նեղութիւն տալ», - գրած է հեղինակը, աւելցնելով. - «Արհեստում սերնդէ-սերունդ կուտակուած փորձի իմացութիւնն ու իր վայելած հեղինակութիւնը, Աւետիսին իրաւունք էր տալիս խիստ լինել յատկապէս արհեստն ու արհեստաւորը թերագնահատող, քամահարանքով մօտեցող յաճախորդներին»: Այդպիսի օր մը, յաճախորդ մը վարպետին կը մօտենայ եւ կը խնդրէ իր սափորը նորոգել: Վարպետը անշուշտ կը նորոգէ: Յաճախորդը նախ շնորհակալ կ'ըլլայ, բայց յետոյ ձեռավարձին գինը իմանալով՝ կը վրդովի: Անոր ծանր դիտողութիւնը լսելով, Աւետիս ետ կ'առնէ սափորը մարդուն ձեռքէն, զայն նախկին վիճակին կը բերէ ու ետ կը ճամբէ զայն: Դէպքէն յետոյ ուրիշներ այդ մարդուն կը հաւաստիացնեն, թէ Աւետիսը պարկեշտ ու մեծ վարպետ է, իսկ իր ուզած գինը՝ շատ տրամաբանական: Մարդը դարձեալ կը ներկայանայ վարպետին: Սափորը կրկին կը վերանորոգուի, բայց այս անգամ Աւետիս կրկին գինը կը պահանջէ: Ենթակալ ընդվզումը տեսնելով, վարպետ Աւետիս կը յարէ. - «Քու սափորը այսքան արագ չէր շտկեր, եթէ մենք 150 տարի այս արհեստին մէջ չըլլայինք»: Հատորի մեծագիրը էջերուն մէջ կը տեսնենք Աւետիսի ձեռքով պատրաստուած մուրճը, դրուագագարդ պղինձէ ապրանքանիշ, Գալէմքեարեան եղբայրներու թուղթին վրայ օգտագործուած դրոշմը, ապա՝ պղինձի վրայ հայերէն եւ արաբերէն կնիքներ՝ «Հալէպ» վերտառութեամբ: Մեծանուն վարպետ հերոսը կը հիւանդանայ, երեք տարի անկողնոյ կը ծառայէ ապա կը վախճանի. - «Հալէպահայութիւնը ազգային փառաշուք յուղարկաւորութեամբ է հրաժեշտ տուել իր հերոսին: Նրա գերեզմանի վրայ յետագայում կառուցուել է Այնթապի հերոսամարտի յուշարձանը՝ Ռուբէն Պարսումեանի նախագծով», - կը գրէ Հ. Թոքմաճեան:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆ
1939 - 2015
ՄԵԼՔՈՆ ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆ
1935 - 1995
ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒ
ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ - ՀԱԼԷՊ
Յովհաննէսի մայրը գինք եկեղեցի կ'առաջնորդէր ու կ'ըսէր. - «Քչոցները կը տեսնե՞ս, Մելքոն դադայիդ գործերն են»: »Չոն Սրբազան պատարագը Յովհաննէսին համար նոր իմաստ կը ստանար», - գրած է հեղինակը: Յովհաննէս մեծապէս կը փափաքէր հմտանալ այդ գործին մէջ եւ կ'անցնի այդ փափաքը իրականաց-

նելու աշխատանքին: Ան կ'որոշէ մեքենայացնել աշխատանքը, վաճառքի մէջ իր մրցունակութիւնը բարձրացնելու նպատակով: Շուրջ տասնհինգ տարի աշխատած ըլլալով ճաբոնական եւ ամերիկեան ընկերութիւններու մէջ, ան հասած էր բարեկեցիկ վիճակի մը, նաեւ ամուսնացած ու ընտանիք կազմած էր: Առիթով մը Քուէյթի մէջ Յովհաննէս կը հանդիպի մանկավարժ, ծանօթ գրող Սիմոն Սիմոնեանին, որ կ'այցանէ զայն իր հօր եւ հօրեղբօր գործը չչարունակելու համար: Բեկում մը կ'առաջանայ երիտասարդի հոգիին մէջ: Առաջին դիտողութիւնը չէր, շատեր արտայայտուած էին այդ մասին: Յովհաննէս նախ կ'աշխատի Պարսումեաններու խանութին մէջ: Գործին սրտով ու համոզումով մօտեցած անոր աշխատանքներէն մին կ'արժանանայ Յունաստանի եւ Դանիոյ իշխան Միքայէլի բարձր գովեստին:

Գրքին մէջ կը տեսնենք կնիք մը, որ իր անունը կը կրէ: «Գալէմքեարեան եղբայրների թողած համբաւը շատ մեծ էր Հալէպում» - կը հաստատէ հեղինակը: Կը տեսնենք նաեւ Յովհաննէսը աշխատանքի պահուն: Արհեստը արուեստի մակարդակին բարձրացումը հայ մարդ, որ տունը նաեւ կոկիկ գրադարան մը ունէր, պղնձագործութեան տարբեր երեսակները բացառելով գիրքերով: «1995-ին, երբ մեռաւ Մելքոնը, գործը վերելքի մէջ էր: Յովհաննէսի հետ էր աշխատում ոչ միայն Արթուրը, այլև քրոջ որդին՝ Աւետիք Պայրուսները: Յաջողութիւնը՝ յաջողութիւնը, բայց ընտանիքը մեծ դժբախտութիւնը կ'ունենայ կորսնցնելու Յովհաննէսի ընտանիքին միակ մանչ զաւակը՝ տաղանդաւոր Արթուրը, որ երաժիշտ էր ու միաժամանակ դրուագող: Յովհաննէս չի լքեր գործը, բայց կորուստին ցաւը չէր կրնար անհետեւնք մնալ եւ աշխատանքին թափը կը կտորուի, կը նուազի: «Յովհաննէսը 1960-ին ամուսնացել է Սօսի Սարգիսեանի հետ, ունեցել է երեք զաւակ՝ Արթուր, Բալիկ, Դալար: Արթուր ամուսնացած էր Գալիանէ իլիգպարեանի հետ: Բալիկը, որ ունի mezzo soprano ձայն, 2003-ին աւարտել է Կոմիտասի անուան երաժշտանոցը՝ երգեցողութիւն օփերային, համերգային երգչուհի, դասատու»: Կնոջ եւ զաւակներուն հետ երջանիկ, Հայաստան հաստատուելու վերջնական որոշում, եւ յանկարծ...

Այո, մահը կու գայ խաթարել ու խանգարել ամէն բան: Անվերադարձ կը մեկնի դրուագումի վարպետ, սերունդներու գործը շարունակող նախապէրը ին մոհիկանը՝ Յովհաննէս Գալէմքեարեան:

ԱՐԹՈՒՆ ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆ
1971 - 2008
Թէեւ Քուէյթ ծնած, բայց Արթուրն «հասակ առաւ Հալէպի հայաբոյր մթնոլորտի մէջ»: Ուսման կողքին հետաքրքրութիւն ցոյց տուաւ հօրը՝ Յովհաննէսի գործին նկատմամբ: Սիրեց մասնաւորաբար դրուագումը: Գիրքին լուսանկարներէն մին իր կեանքէն պահ մը ցոյց կու տայ, երբ ինք իր աշխատանոցին մէջ է, կինը կող-

քին, 2002, Ֆրանքֆորթ: «Արթուրն երաժշտական յաջողութիւնները ակնյայտ էին, ունէր հրաշալի դեկավար՝ երգահան Արամ Սթեան: ...Երգչախմբի կազմով արտասահմանեան շրջագայութիւնները, շփումը անուանի երաժիշտների հետ մեծ ազդեցութիւն էին թողել Արթուրի վրայ: Նա որոշում է հմտանալ իմբավարութեան մէջ: Անուանի դիրիժոր Եուրի Դալթեանի դասարանը նա աւարտում է 2005-ին»: Լուսանկար մը Արթուրը ցոյց կու տայ քանդակագործ Տարիէլ Յակոբեանի հետ Երեւանէն ոչ շատ հեռու գտնուող Նոր Այնթապ գիւղի, Աւետիս Գալէմքեարեանի կիսանդրին մօտ: Ձինք կը տեսնենք նաեւ իր ուսուցիչ Արամ Սթեանի կողքին՝ դաշնամուրի առջեւ: Յետոյ՝ իմբավար Արթուր, Հալէպի համազգայինի «Չուարթնոց» երգչախումբի կազմին հետ՝ բեմի վրայ: Դաժան հիւանդութիւնը երկու երջանիկ ընտանիք քանդեց: Թոքմաճեան կը գրէ. - «Դաժան հիւանդութեան ճիւղաններից Արթուրին փրկելու բոլոր ջանքերը ապարդիւն անցան: Մեր ժողովրդի շնորհալի զաւակներից մէկը անժամանակ հեռացաւ կեանքից: Յաւալիօրէն, հմուտ շարականագէտ եւ անուանի արհեստաւոր Կարապետի ծոռնորդին աշխարհից հեռացաւ կիսատ թողնելով արհեստի ու երաժշտութեան վերաբերեալ բազմաթիւ գործեր»:

Հատորին հեղինակը իր օգտագործած աղբիւրները յիշատակելէ յետոյ, ընթերցողներու տեսադաշտին կը պարզէ յատուկ բաժին մը՝ «Վերատպութիւն» անուանումով, ուր բացառիկ ճաշակով շարունակ կը գտնենք աւելի քան 200 վերատպութիւն՝ աշխատանքները բոլոր իրերայաջորդ Գալէմքեարեաններուն, որոնց յորինումները այսօր ու վաղն ալ պիտի շարունակեն հպարտութիւն առթել: Հրագրան Թոքմաճեան գրքին էջերը հարստացուցած է բացատրութիւններով եւ պատմական տեղեկութիւններով: Գիրքը հարուստ է

լուսանկարներով պնակ, սափոր, կրակարան, յուշանուէր, պսակի թագ, աւետարանի կազմ, գինիի թաս, բազկի զարդարանք, Հալէպի Ս. Խաչ եկեղեցի (ճարտարապետ՝ Սարգիս Պալմանուկեան), մասնատուփ, ինկաման, մոմակալ, շարք մը սրբազաններու լուսանկարները, որոնք Հալէպի հայ յարանուստութիւնը պահելու, արդիւնաւորելու ճիգին նուիրուած, մահը աչք առած են ամէն օր ումբակոծումի ենթարկուող Հալէպի մէջ: Մեռնաթափ աղանի, սկիհ, շամփայնի սառաման, ունելի, շաքարաման, մատուցարաններ, պաղպաղակի ափսէ, ծաղկամաններ, խորան, հայ աչքուբեն, ապարանջան, պողաման, կլկլակ, դրամապանակ, գարեջուրի գաւաթ, կանացի պայուսակ, ճաշաման, դոյլեր, ջուրի սափոր, թանի սափոր... եւ այս բոլորը հայու ճարտար ձեռքերով կատարուած հարուստ դրուագումներով: Գեղանկարիչ Հրազդան Թոքմաճեան լայն ու օգտաշատ գործունէութիւն ծաւալեց Հալէպի մէջ: Ան սիրեց այդ աւանդապահ ու հայաշատ քաղաքը եւ տիրութեամբ հեռացաւ այդ ուստանէն, գոր աւելի քան հինգ տարիներէ ի վեր չար ուժերը կը շարունակեն փխտակներու կոտոր վերածել՝ Արեւմուտքի եւ Թուրքիոյ անմիջական մասնակցութեամբ: Խաւարի դեսպաններ բոլորը, մինչ Գալէմքեարեանները՝ լոյսի տարածիչներ եղան ամբողջ 200 տարի, պատմութիւն, որ այս գիրքին մէջ վերառած ու հրաշալիօրէն հաստատած է Հրազդան Թոքմաճեան: Գունատիպ, աչք շոյող եւ հազար օրինակով լոյս տեսած այս հատորը հազուագիւտ միասնութիւն մը կը ներկայացնէ մեզի:

Արհեստը արուեստի ու լոյսի վերածած Գալէմքեարեան ընտանիքի գործերէն ինչուսն ու աշխատանքները, հատորի հեղինակ Հրազդան Թոքմաճեանը եւ ինչպիսի ու հեռատես մեկենաս ամուրձ՝ Արմէն եւ Միմի Յարութիւնեանները: Ահա թէ ինչ արդիւնք կրնայ տալ ճիշդ միասնութիւնը:

ՊԱՅԵՆՔ ՈՒ ԳՈՒՐԳՈՒՐԱՆՔ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԸ

Շարունակուած էջ 18-էն

գործեր եւ գնահատելի աշխատանք: Այնուհետեւ ներկաները հիւրասիրուեցին: Մշակոյթի տօնը Թեհրանում առաւել շուք եւ փայլ է ստանում ուսուցիչների մեծարանքին նուիրուած հանդէսով՝ գեղարուեստական բարձրարուեստ կատարումներով, որն աւանդական սովորութիւն է դարձել, ներկայ է գտնուում համայնքիս վարչական կոլեգիան հանդերձ հայկական դպրոցների ծառայողական անձնակազմերը եւ հրաւիրեալներ Առաջնորդ Սրբազանի հովա-

նաւորութեամբ: Գնահատանքի են արժանանում հանգստի կոչող հայ ուսուցիչները եւ պարգևագրուած, ապա ներկաները հիւրասիրուած են: Մշակոյթի հանդիսութեանց մէկ պտղունցը ներկայացուեց, այն ինչ որոնց ներկայ էի գտնուել, ուսուցիչներին նուիրուած հանդէսի մասին տպաւորութիւնս էր իմ անցեալի թարմ յուշերից, այս հանդէսը ամէն տարի տեղի է ունենում: Ահաւասիկ Թեհրանում այսպիսի ջանասիրութեամբ ու բծախնդրութեամբ կազմակերպում եւ տօնում են մեր մշակոյթի տօնը: Վարձքները կատար:

OFFICE SPACE FOR RENT IN PASADENA
ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենյակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով հետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506

ՀԵՆՐԻԽ ՄԻՒԹԱՐԵԱՆԸ ԵՐԿԱՐԱՏԵՒ ՍՊԱՍՈՒԱԾ ՅԱՂԹԱՆԱԿ ՊԱՐԳԵԻՅ ԻՐ ԹԻՄԻՆ



«Մանչեսթեր Եունայթեդը», որի կազմում հանդես է գալիս Հայաստանի հաւաքականի աւագ Հենրիխ Միւթարեանը, Անգլիայի ֆուտպոլի առաջնութեան 15-րդ տուրի խաղում սեփական դաշտում յաղթեց Լոնտոնի «Տոտենհեմին»:

Հանդիպման միակ կողմ 29-րդ րոպէին հեղինակեց մեր ֆուտպոլիստը: Աւաղ, խաղի 84-րդ րոպէին Հենրիխ Միւթարեանին վնասուածք հասցրեց հիւրերի ֆուտպոլիստը եւ նրան պատգարակով դուրս բերեցին դաշտից:

«Մանչեսթեր Եունայթեդը» Հենրիխ Միւթարեանի խփած կողի օգնութեամբ վերջապէս յաղթանակ տարաւ երեք անընդմէջ ոչ-ոքիներից յետոյ եւ պահպանեց 6-րդ տեղը: Յաջորդ խաղը մանչեսթրցիները կ'անցկացնեն Դեկտեմբերի 14-ին, «Քրիստալ Պելապի» դաշտում:

Աւելի ուշ, «Մանչեսթեր Եունայթեդը» գլխաւոր մարզիչ Ժոզէ Մուրինյոն հանդիպումից յետոյ ակումբի պաշտօնական ակտիւ (MUTV) եթերում խօսել է Միւթարեանի վնասուածքի վերաբերեալ:

«Վնասուածքը շատ լուրջ է, վիրահատական միջամտութեան կարիք չկայ: Միւթարեանը բաց կը թողնի յաջորդ հանդիպումը, բայց յոյս ունենք՝ նա պատրաստ կը լինի «Boxing Day»-ին», - ասել է պորտուգալացի մասնագէտը:

«ՈՍԿԵ ԳՆՂԱԿԸ» ԿՐԻՇՏԻԱՆՈՒ ՌՈՆԱԼԴՈՒԻՆ

Մադրիդի «Ռեալի» պորտուգալացի յարձակուող Կրիշտիանու Ռոնալդուն արժանացաւ France Football-ի «Ոսկէ Գնդակին»:



Պորտուգալացի հաւաքականի աւագն առաջ անցաւ «Բարսելոնայի» արգենտինացի յարձակուող Լիոնել Մեսսիից, իսկ Մադրիդի «Աթլետիկոյի» ֆրանսիացի ումբարկու Անտուան Գրիզմանը եզրակէտեց լաւագոյն ետեակը: «Բարսելոնայի» յարձակուողներին Լուիս Սոււարեսը չորրորդն է, իսկ Նեյմարը՝ 5-րդը:

Ռոնալդուն այս օրերին Արքայական ակումբի կազմում ձապոնիայում է, որտեղ կը մասնակցի աշխարհի ակումբային առաջնութեանը: Պորտուգալացի յարձակուողը «Ոսկէ Գնդակին» արժանացել էր նաեւ 2008, 2013 եւ 2014 թուականներին:

Հինգ տարի անց France Football-ն աշխարհի լաւագոյն ֆուտբոլիստին դարձեալ ընտրեց ՖԻՖԱ-ից աւանձին՝ լրագրողների քուէարկութեամբ: Նախորդ հինգ տարիներին աշխարհի լաւագոյն ֆուտբոլիստին ֆրանսիական պարբերականն ու ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան ընտրում էին լրագրողների, հաւաքականների մարզիչների եւ աւագների համատեղ քուէարկութեամբ:

«ՉԵԼՍԻՆ» ԴԱՐՁԵԱԼ ԳԼԽԱԴՈՐԵՑ ՊՐԵՄՅԵՐ ԼԻԳԱՅԻ ՄՐՅԱՇԱՐԱՅԻՆ ԱՐԻՄԱԿԸ

Անգլիայի առաջնութեան 15-րդ տուրում Լոնտոնի «Չելսին» սեփական խաղադաշտում մրցեց «Վեստ Բրոմվիչի» հետ: Իտալացի Անտոնիօ Կոնտէի գլխաւորած թիմին յաղթանակ բերեց Դիեգո Կոստայի կողմէ՝ 1:0: Անգլիայի առաջնութեան 15-րդ տուրում «Լիվերպոլն» ընդունեց «Վեստ Հեմին» եւ բաւարարուեց ոչ ոքի արդիւնքով՝ 2:2:

Գերմանացի Թուրգեն Կլոպի գլխաւորած թիմը 31 միաւորով երրորդ տեղում է եւ 3 միաւոր է գիջում երկրորդ տեղում ընթացող «Արսենալին»: Առաջատարը «Չելսին» է՝ 37 միաւոր:

«ԲԱՐՍԵԼՈՆԱՆ» ՅԱՂԹԵՑ ԽՈՇՈՐ ՀԱՇՈՒՈՎ

Սպանական Պրիմերայի 15-րդ տուրում «Բարսելոնան» 3:0 հաշուով արտագնայ յաղթանակ տարաւ «Օսասունայի» նկատմամբ:

Առաջին խաղակէստում կատալոնացիներն ունէին հսկայական առաւելութիւն, որը կողի վերածել է չաջողուեց: Հիւրերը հաշիւը բացեցին ընդմիջումից յետոյ: 59-րդ րոպէին աչքի ընկաւ ուրուգուացի յարձակուող Լուիս Սոււարեսը, որի կողին յաջորդեց Լիոնել Մեսսիի դուբլը: Արգենտինացի յարձակուողը 550-րդ հանդիպումն էր անցկացնում

ԾԱՆՐՈՐԴ ՍԻՄՈՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԸ ԴԱՐՁԱՒ ԵՐՐՈՊԱՅԻ 23 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ԱՆՈՅԵԱՆ

31-րդ ամառային Օլիմպիական խաղերի փոխախոյան Սիմոն Մարտիրոսեանը դարձաւ մինչեւ 23 տարեկանների Եւրոպայի առաջնութեան ախոյան: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ իսրայէլական էլիթ քաղաքում աւարտուած առաջնութեան 105+ կգ քաշային կարգում պատանեկան Օլիմպիական խաղերի ախոյան Սիմոն Մարտիրոսեանը պոկեց 180, հրեց 220 կգ եւ երկրամարտի 400 կգ արդիւնքով դարձաւ Եւրոպայի ՄՅ 23 տարեկանների ախոյան:



Հայաստանի ներկայացուցիչ մինչ 23 տարեկաններում հանդէս եկող Մկրտիչ Մկրտչեանը զբաղեցրեց 4-րդ տեղը: Հայ ծանրորդը պոկում վարժութիւնում բարձրացրեց 170 կգ զրաւեց 3-րդ տեղ եւ արժանացաւ փոքր պրոնզէ մետալի, իսկ հրումում՝ 201 կգ եւ երկամարտի 371 կգ արդիւնքով գրաւեց 4-րդ տեղը:

Մանրամարտի Եւրոպայի մինչեւ 20 եւ 23 տարեկանների առաջնութիւններում Հայաստանը ներկայացնում են, ընդհանուր առմամբ, 13 մարզիկներ:

ԴԱԻԹ ԱՎԱՆԵՍԵԱՆԸ ԿԸ ՄԵՆԱՄԱՐՏԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼԱՍՈՆՏ ՊԻՏԵՐՍՈՆԻ ՀԵՏ

Պրոֆեսիոնալ բռնցքամարտի կիսամիջին քաշային կարգում WBA վարկածով աշխարհի ախոյան, ուսաստանցի Դաւիթ Աւանեսեանը կը մենամարտի ամերիկացի Լամոնտ Պիտերսոնի հետ, որը WBA եւ IBF վարկածներով աշխարհի նախկին ախոյան է առաջին կիսամիջին քաշային կարգում:



«Աւանեսեանը տիրորդ կը պաշտպանի Պիտերսոնի դէմ մենամարտում: Բանակցութիւնները մօտենում են աւարտին», - Tass-ին ասել է WBA-ի ներկայացուցիչը:

Կարիերայի ընթացքում Պիտերսոնը յաղթանակ է տարել նաեւ հռչակաւոր բրիտանացի Ամիր Խանի նկատմամբ: Նա ունի 34 յաղթանակ, դրանիցից 17-ը նոկաուտով: Երեք պարտութիւն է կրել, մէկ մենամարտ աւարտել է ոչ ոքի:

Նախորդ մենամարտում յայտնի ամերիկացի Շելլ Մոգլիին յաղթած Աւանեսեանը կարիերայի ընթացքում տարել է 22 յաղթանակ (11 նոկաուտ), կրել է մէկ պարտութիւն, մէկ անգամ էլ զրանցել է ոչ ոքի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՐԱՆԻ ՖՈՒՏՊՈՒԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՆԵՐԸ ՍՏՈՐԱԳՐԵՑԻՆ ՓՈՒՆԸՄԲՈՒՍԱՆ ՅՈՒՇԱԳԻՐ

Դեկտեմբերի 10-ին Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբէն Հայրապետեանը եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան ֆուտպոլի ֆեդերացիայի նախագահ Մեհրի Թաշի Ռաշիդի Թաշը ստորագրեցին երկու երկրների ֆուտպոլի ֆեդերացիաների միջեւ փոխըմբռնման յուշագիր, որն իրենից ենթադրում է երկու երկրների միջեւ ֆուտպոլային համագործակցութեան մակարդակի բարձրացում եւ յարաբերութիւնների խորացում:



Մինչ հուշագրի ստորագրումը Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբէն Հայրապետեանը Իրանի Իսլամական Հանրապետութեան ֆուտպոլի ֆեդերացիայի նախագահ Մեհրի Թաշի Ռաշիդի պաշտօնական ներկայացուցիչների, Հայաստանի Հանրապետութիւնում Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպան Սեյդ Բազիմ Սաղջաղիի, դեսպանութեան ներկայացուցիչների հետ շրջեց ՀՖՖ Տեխնիկական կենտրոնի՝ ֆուտպոլի ակադեմիայի տարածքով՝ հիւրերին ծանօթացնելով ենթակառուցուածքների հետ:

ԻԻՀՖՖ նախագահ Մեհրի Թաշը շնորհակալութիւն յայտնեց հայկական կողմին ջերմ ընդունելութեան համար՝ նշելով, որ յուշագրի ստորագրումը նոր խթան կը հանդիսանայ երկու երկրների միջեւ ֆուտպոլային համագործակցութեան ընդլայնման համար՝ ընդգրկելով նորանոր ոլորտներ: ԻԻՀՖՖ եւ ՀՖՖ նախագահները նաեւ պատասխանեցին լրագրողների հարցերին:

«Բարսելոնայի» կազմում: Մեսին 11 կողով գլխաւորեց ումբարկուների ցուցակը՝ մէկական գնդակ առաջ անցնելով Լուիս Սոււարեսից ու Կրիշտիանու Ռոնալդուից:

Լուիս Էնրիկէի թիմը 31 միաւորով երկրորդ տեղում է եւ 3 միաւոր է հետ առաջատար Մադրիդի «Ռեալից»: